

# ՄԻԶԱԶԳՎԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԲՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

### ՎԱՅԱՆ ԲԱՅՐՈՒՐԴՅԱՆ

Առաջին աշխարհամարտում Օսմանյան թուրքիան կրեց ջախջախիչ պարտություն: Անտանտի տերությունները դրեցին նրա մասնատման հարցը: Դա թույլ չտալու նպատակով թուրք ազգայնականները գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ Անատոլիայում կազմակերպեցին իշխանության այլընտրանքային կենտրոն: «Հայրենիքը վտանգի մեջ է» կարգախոսի ներքո գործող թուրք ազգայնական-քեմալականների նախապես փոքրիկ խմբակը, հետզհետե ուժ հավաքելով, դառնում էր հզոր շարժում: Ի վերջո այն ավարտվեց ազգայնականների հաղթանակով, և 1923 թ. հոկտեմբերին թուրքիան հայտարարվեց հանրապետություն:

Շարժման հենց առաջին օրերից Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները հատուկ ուշադրություն էին դարձնում քրդական պրոբլեմին, որովհետև վերջին հաշվով Անատոլիայում մեծ զանգված կազմող քրդերի քաղաքական կողմնորոշումից էր նաև նշանակալից չափով կախված այն հարցը, թե արդյոք իրենց հաջողվելու է Արևմտյան Հայաստանը և թուրքական Քրդստանը պահել «Նոր թուրքիայի» կազմում: Քեմալականներին հայտնի էր, որ քրդերը ծրագրեր են մտնում Արևելյան Անատոլիայում անկախ պետություն ստեղծելու կամ առնվազն թուրքական պետության շրջանակներում ինքնավարություն ձեռք բերելու ուղղությամբ: Անդրադառնալով այդ հարցին՝ Մուստաֆա Քեմալը իր ելույթներից մեկում առաջին անգամ հայտարարեց, որ «Քրդստանի վերածնության կազմակերպությունը», որը բաժանուններ ուներ Դիարբեքիրում, Բիթլիսում ու Խարբերդում, և որի ղեկավար կենտրոնը գտնվում էր Ստամբուլում, ձգտում է ստեղծել քրդական պետություն օտարերկրյա հովանու ներքո<sup>1</sup>: Միանգամայն ակնհայտ էր, որ Քեմալը ակնարկում էր քուրդ ազգայնականների քաղաքական կողմնորոշման մասին հանդեպ եռյակ համաձայնության պետությունները, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան: Քրդական շարժմանը տոն տվող գործիչներն անշուշտ գիտակցում էին, որ երկրում ընթացող թուրք ազգայնական շարժման պայմաններում անհրաժեշտ է շատ արագ հստակեցնել իրենց քաղաքական կողմնորոշումը, այլապես քրդերի դեմ կուղղվեն քեմալական զորքերի մահացու հարվածները: Ուստի 1919 թվականի ամռանը քրդական ազգային շարժման գործիչները էրզրումում գումարեցին համագումար, որում ընդունված բանաձևում անթաքույց համակրանք էր դրսևորվում «թուրքական ազատագրական շարժման» նկատմամբ: Միաժամանակ հայտարարվում էր, որ քրդական ազգային շարժումը մտադիր է աջակցել միլի-քեմալականներին՝ պայմանով, որ թուրք ազգայնականները Քրդստանին

<sup>1</sup> Տե՛ս **Мустафа Кемаль. Путь новой Турции. 1919–1927.** Т. 1. М., 1929, էջ 9:

տրամադրեն ինքնավարություն: Հրաժարման դեպքում համագումարն արտահայտվում էր հոգուտ քրդական լայն ապստամբության<sup>2</sup>:

Քուրդ առաջնորդների նման մոտեցումը լիովին բավարարում էր Մուստաֆա Քեմալին: Շարժման սկզբնական փուլում, երբ դեռ ապագան անորոշ էր, թուրք ազգայնականների հեռատես ու շրջահայաց առաջնորդին բնավ ձեռնառու չէր քրդերին վանել իրենցից: Ընդհակառակը, պրագմատիկ շահը պահանջում էր գեթ առժամանակ սիրաշահել նրանց, ներքաշել իրենց քաղաքականության ոլորտը և հնարավորինս օգտագործել քրդերի ռազմական ներուժը պատերազմների ճակատում հաղթանակի հասնելու համար: Այդ առթիվ բրիտանական ծովակալ Դե-Ռոբեկը Ստամբուլից լորդ Քերզընին հղած 1919 թ. դեկտեմբերի 26-ի հեռագրում հաղորդում էր, որ Քեմալ փաշան ձեռնամուխ է եղել «իսլամական ուժերի» («ղուվվայի իսլամիյե») ստեղծմանը, որոնց մեջ ընդգրկվելու են նաև քրդեր<sup>3</sup>:

Առաջնորդվելով վերոհիշյալ նկատառումներով՝ շարժման սկզբնական փուլում քեմալականները որդեգրեցին «քրդերը Թուրքիայում թուրքերի պես իրավահավասար ժողովուրդ են»<sup>4</sup> կարգախոսը: Այսպիսով, չգնալով քուրդ ժողովրդի գոյության մերժման և նրա քաղաքական իղձերը չճանաչելու ավանդական ճանապարհով, քեմալականներն ապահովեցին քրդերի ռազմական ուժի օգտագործումը արևմուտքում հույների, իսկ արևելքում հայերի դեմ: Առաջնորդվելով Մուստաֆա Քեմալի իջեցրած դիրեկտիվով՝ քեմալական շարժման գաղափարախոսները սկսեցին զարգացնել այն տեսակետը, որ թուրքերի և քրդերի միջև ազգային-էթնիկական ու մշակութային առումով էական տարբերություններ գոյություն չունեն, որ երկու ժողովուրդներն էլ դավանում են նույն կրոնը՝ իսլամը, ունեն համանման քաղաքական շահեր, նույն «հողի ու ջրի զավակներ են» և այլն<sup>5</sup>:

Այդ բոլորի հետ միաժամանակ, անկասկած, քրդերին իրենց կողմը գրավելու և նրանց ռեսուրսները օգտագործելու թիվ առաջին լծակը Հայկական հարցն էր: Քեմալականներն աշխատում էին քրդական ցեղային առաջնորդներին և առհասարակ քուրդ բնակչությանը համախմբել հակահայկական պլատֆորմի (ծրագրի) շուրջը: Մասնավորապես, քրդերին ներշնչում էին այն գաղափարը, որ թուրք-քրդական դաշինքի հիմք պետք է լինի հայերի անկախության ձգտումների չեզոքացումը: Այդ դաշինքի գլխավոր նպատակ էին հռչակվում երկրի տարածքային ամբողջականության պահպանումը և «թուրքական ու քրդական մեծամասնության» շահերի ապահովումը<sup>6</sup>:

Նման ճկուն, սակայն ստահող հնարքներով քեմալականներին հաջողվեց ոչ միայն իրենց համար դժվարին ու ճգնաժամային պահին քրդերին լծել իրենց քաղաքականության կառքին, այլև աստիճանաբար «նա-

<sup>2</sup> St'u Memorandum sur la situation des Kurdes et leurs revendications, présenté à: Mr. Trygve Lee at aux Etats members de LO. N.U.P., 1948:

<sup>3</sup> St'u Documents on British Foreign Policy, 1919-1939, First Series, vol. II, London, 1948, էջ 563-564 (այսուհետև՝ DBFP):

<sup>4</sup> Лазарев М. С., Мгон Ш. Х., Васильева Е. И., Гасратян М. А., Жигалина О. И. История Курдистана. М., 1999, с. 246.

<sup>5</sup> St'u DBFP, vol XIII, № 288, էջ 301:

<sup>6</sup> St'u Мустафа Кемаль, նշվ. աշխ., էջ 99-100:

րել» քրդական հարցի սրությունը: Դրանում չափազանց կարևոր դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ 1919 թ. Փարիզի միջազգային վեհաժողովում Հայկական հարցի ակտիվ քննարկումները և Արևմտյան Հայաստանում հայկական պետություն ստեղծելու իրական հեռանկարը ոչ պակաս անհանգստացնում էին նաև քուրդ ազգայնականներին, քրդական ավատական վերնախավին և առհասարակ քրդական զանգվածին: Քրդերի մոտ արմատավորվել էր այն վախը, որ Արևմտյան Հայաստանում հայկական պետության ստեղծումով իրենց շահերը կտուժեն, և իրենք կվերածվեն երկրորդական մի ուժի: Քրդերը ձգտում էին ապագա քրդական պետության մեջ ներառել նաև Արևմտյան Հայաստանի մի մասը:

Նշված իրողությունները նկատի ունենալով՝ բրիտանացի ծովակալ Քալթորփը 1919 թ. հուլիսի 29-ին գրում էր լորդ Քերզընին, որ «Մեծ Հայաստանի» մասին խոսակցությունները քրդերին նետում են թուրքերի գիրկը<sup>7</sup>:

1919 թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 10-ը երզրումում «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» գումարած համաժողովին, որը քննարկման էր ենթարկելու քենալական շարժման ծրագրային հարցեր, ակտիվ մասնակցություն ունեցան նաև քուրդ գործիչները: Համաժողովի ընդունած մանիֆեստում ասվում էր, որ «Էրզրում, Սըվաս, Դիարբեքիր, Խարփութ (Խարբերդ), Վան, Բիթլիս վիլայեթները կազմում են մեկ միասնական ամբողջություն, որը ոչ մի պատրվակով կամ պատճառաբանությամբ չի կարող անջատվել կամ բաժանվել Օսմանյան կայսրության կազմից: Այդ տարածքներում ապրող մահմեդականները դիտվելու են որպես միևնույն ծնողներից սերած զավակներ»<sup>8</sup>:

Պանթուրքիզմով շղարշված նման պանիսլամիզմը անհրաժեշտ էր թուրք ազգայնականներին, որպեսզի, խաղալով կրոնական զգացմունքերի վրա, իրենց շուրջը համախմբեին Թուրքիայի ողջ մահմեդական բնակչությանը՝ քրդերին, չերքեզներին, լազերին և այլն, ու նրանց հանեին քենալականների դեմ մարտնչող հույների, առհասարակ երկրի քրիստոնյա բնակչության և առաջին հերթին հայերի դեմ:

1919 թ. օգոստոսին Էրզրումի համաժողովի որոշումը Մուստաֆա Քենալը ուղարկեց քրդական մի շարք խոշոր ցեղապետերի՝ տեքստին կցելով նաև մի ուղերձ, որտեղ նա կոչ էր անում պայքարել հայերի և այլ թշնամիների դեմ<sup>9</sup>:

Քուրդ ազգայնականները և կրոնական սկզբունքներով առաջնորդվող ավատատերերի մի զգալի մասը դրականորեն արձագանքեցին Մուստաֆա Քենալի կոչին:

Էրզրումի համաժողովի ոգով որոշումներ կայացվեցին նաև քենալականների գումարած Սըվասի (Սեբաստիայի) համաժողովում, որը տեղի ունեցավ 1919 թ. սեպտեմբերին<sup>10</sup>: Հետագայում Էրզրումի և Սըվասի համաժողովների որոշումներն ընկան քենալականների՝ 1920 թ. հունվարի 28-ին հռչակած այսպես կոչված «Ազգային ուխտի» հիմքում: Այդ «ուխտի»

<sup>7</sup> Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 540-541:

Мустафа Кемаль, նշվ. աշխ., էջ 381:

<sup>9</sup> Տե՛ս Ataturk K. Nutuk, cilt II, Istanbul, 1962, էջ 940:

<sup>10</sup> Տե՛ս Askun V. C. Sivas Kongresi, Istanbul, 1963, էջ 149-150:

հենց առաջին կետը ազդարարում էր. «Օսմանյան կայսրության այն մասի ճակատագիրը, որը բնակեցված է բացառապես արաբներով, պետք է որոշվի բնակչության ազատ քվեարկությամբ: Մնացած մասը, որն ունի օսմանա-մուսուլմանական բնակչության մեծամասնություն, միավորվում է կրոնական և ռասայական հիմքի վրա և կազմում է մի ամբողջություն, որի տրոհումն ու մասնատումը չի կարելի թույլատրել»<sup>11</sup> ոչ մի կերպ:

Սա նախ նշանակում էր, որ, ըստ քեմալականների, թուրքիայում ապրում են միայն թուրքեր, ուստի «Ազգային ուխտի» ընդունումը նշանակում էր, որ քեմալականները բացառում են Արևելյան Անատոլիայում ինչպես հայկական, այնպես էլ քրդական պետությունների ստեղծումը:

Քեմալականների «ուխտադրուժ դավաճանության» դեմ 1919 թ. ամռանը քրդերը Սալաֆիայում բարձրացրին ապստամբություն, որի կազմակերպման գործում եռանդուն մասնակցություն ունեցան «Քրդատանի վերածնության ընկերության» անդամները: Ապստամբությանն աջակցում էին նաև այդ վայրերում գործող բրիտանական հետախույզները<sup>12</sup>: Դա քրդերի առաջին հակաքեմալական ելույթն էր:

Շարժումը հենց սաղմում ոչնչացնելու նպատակով քեմալականները ձեռնարկեցին կտրուկ միջոցառումներ: 1919 թ. սեպտեմբերի 10-ին քրդերի դեմ գործող բանակի դաշտային հրամանատարներին դիրեկտիվ իջեցվեց «ամենաարմատական ձևով ճնշել խռովությունը» և «բոլոր ապստամբներին, որոնք սպառնում են թուրքիայի ազգային գոյությանը, անխնա կոտորել»<sup>13</sup>:

1920 թ. ամռանը թուրքիայում քրդական հարցը ունեցավ նոր առկայծումներ: Դերսիմ-Քոչգիրի շրջանում, որն առավելապես բնակեցված էր թուրքական կառավարության նկատմամբ թշնամական զգացմունքներ տածող ղզլբաշ կամ ալավի (ալի-իլլահի) քրդական ցեղերից, զինված ապստամբության նախապատրաստություններ էին ընթանում: Այն բռնկվեց 1921 թ. գարնանը: Ապստամբությունը տարածվեց նաև քրդաբնակ այլ շրջաններում՝ ընդգրկելով 15 հազ. քառ. կմ տարածք<sup>14</sup>: Շարժումը գնալով ծավալվում էր և ընդունեց այնպիսի հուժկու թափ, որ Անկարայի կառավարությունը ստիպված էր հունական ճակատից հանել թուրքական զորքերի մի մասը և ուղարկել ապստամբների դեմ: Քեմալականներին հաջողվեց այդ ընդվզումը ևս արյան մեջ խեղդել: Ընդ որում, Անկարան այդ շարժումը որակեց «կրոնական մոլեռանդների», «հետադիմականների» խռովություն, իսկ շարժման ղեկավարներին անվանեց «իմպերիալիզմի գործակալներ»:

Քեմալականները շարունակեցին երիտթուրքերի սկսած թուրքիան «խորթ տարրերից» սրբել-մաքրելու քաղաքականությունը: Հայերին ցեղասպանության ենթարկելուց հետո այժմ հերթը հասել էր քրդերին և Անկարան որոշել էր իր ձևով լուծում տալու նաև քրդական հարցին:

Ինչպես հայտնի է, 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը առաջին միջազգային-իրավական ակտն էր, որն անդրադառնում էր քրդական հարցին և ճանաչում էր քրդերի իրավունքները որպես առանձին

<sup>11</sup> Lewis G. L. Turkey, London, 1952, p. 58.

<sup>12</sup> Տե՛ս **Kemali A.** Erzincan. Tarihi, coğrafı, içtimai, etnografı, idori, ihsai, tetkikat tecrübesi, Erzincan, 1932, էջ 951:

<sup>13</sup> **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., էջ 255-256:

<sup>14</sup> Տե՛ս **Dersimi M. N.** Kürdistan Tarihinde Dersim, Halep, 1952, էջ 130:

էթնոսի: Այդ պայմանագիրը նախատեսում էր Թուրքիայի տարածքում նախ ստեղծել ինքնավար Քրդստան՝ իրավունք վերապահելով նրան մեկ տարուց հետո անջատվելու Թուրքիայից և ստեղծելու անկախ Քրդստան<sup>15</sup>: Սակայն Անկարայի կառավարությունը վճռականորեն հայտարարեց, որ չի ճանաչելու Սևրի պայմանագիրը: 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Եռյակ համաձայնության պետությունների՝ Լոնդոնի խորհրդաժողովում թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի-բեյը հայտարարեց, որ «քրդերը ոչինչ չեն ցանկանում՝ բացի թուրքերի հետ որպես եղբայրներ ապրելուց»<sup>16</sup>: Նշանակում է, որ թուրքական պատվիրակությունը հանդես էր գալիս քրդերի ազգային ինքնորոշման դեմ: Ըստ այդմ, Բեքիր Սամի-բեյը խորհրդաժողովում պահանջում էր չեղյալ հայտարարել Սևրի պայմանագրի՝ քրդերին վերաբերող համապատասխան հոդվածները՝ վկայակոչելով այն «փաստարկը», որ քենալական իշխանությունները քրդական հարցը դիտում են որպես Թուրքիայի ներքին հարց<sup>17</sup>: Բեքիր Սամի-բեյը կաշվից դուրս էր գալիս խորհրդաժողովի մասնակիցներին համոզելու, որ քրդերը «Թուրքիայի հետ մշտապես կազմել են անբաժան մաս, որ երկու ռասաները միավորված են ընդհանուր զգացմունքներով, ընդհանուր մշակույթով և ընդհանուր կրոնով», որ «թուրքերի և քրդերի տարբերությունը ավելի մեծ չէ, քան անգլիացիների և շոտլանդացիների միջև է»<sup>18</sup>:

Ի վերջո, 1921 թ. մարտի 11-ին դաշնակից պետությունները Լոնդոնի խորհրդաժողովում հայտարարեցին, որ իրենք պատրաստ են ընդունելու Սևրի պայմանագրի փոփոխությունները «գոյություն ունեցող իրադրության փաստերին հարմարեցնելու իմաստով»: Դա նշանակում էր, որ Եռյակ համաձայնության քաղաքական ծրագրերից իսպառ հանվում էր անկախ կամ ինքնավար Քրդստան ստեղծելու հարցը: Դա, անտարակույս, քենալական դիվանագիտության խոշոր հաղթանակն էր: Միանգամայն ակնհայտ էր, որ Լոնդոնում քաղաքական սակարկությունը կատարվում էր հայ և քուրդ ժողովուրդների հաշվին: Այդ առումով վերին աստիճանի ուշագրավ է Անգլիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջի և Բեքիր Սամի-բեյի միջև տեղի ունեցած զրույցը, որը կայացավ Լոնդոնի խորհրդաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո՝ մարտի 16-ին, բրիտանական համայնքների պալատի շենքում: Խոսելով այն զիջումների մասին, որ Լոնդոնը կարող է անել Թուրքիային՝ բրիտանական վարչապետը հիշատակեց Հայաստանի ու Քրդստանի անունները: Իսկ Բեքիր Սամի-բեյը պատասխանեց, որ Միջագետքը «թանկ գին չէ հանուն բրիտանական բարեկամության», ապա ավելացրեց, որ Անկարան մտադիր չէ Անգլիային անախորժություններ պատճառելու Մոսուլում<sup>19</sup>:

1922 թ.՝ հույների նկատմամբ քենալականների տարած վճռական հաղթանակից հետո, Եռյակ համաձայնության արդեն պառակտված պետությունները սկսեցին նախապատրաստական աշխատանքներ տանել Թուր-

<sup>15</sup> Տե՛ս Treaty of Peace with Turkey, signed at Sevres, August 10, 1920. The Frontier between Armenia and Turkey. As decided by President Woodrow Wilson, November 22, London, 1920:

<sup>16</sup> DBFP, vol. XV, International Conferences and Conversations 1921, № 26, p. 213-214.

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը № 24, էջ 194, 197-198:

<sup>18</sup> Նույն տեղում № 26, էջ 213-214:

<sup>19</sup> Տե՛ս DBFP, vol. XV, № 65, էջ 441:

քիայի հետ միջպետական պայմանագիր ստորագրելու ուղղությամբ: Այդ նպատակով 1922-1923 թթ. Լոզանում գումարվեց միջազգային խորհրդաժողով, որը կոչված էր վճռելու Թուրքիայի և դաշնակիցների միջև բոլոր վիճելի հարցերը: Լոզանի կոնֆերանսը ոչ միայն դարձավ Հայկական հարցի գերեզմանումը, այլև վերջնականապես փակեց քրդական հարցը: Քեմալական կառավարությունը կտրականապես պահանջեց քրդական հարցը չընդգրկել կոնֆերանսի օրակարգում<sup>20</sup> այն հիմնավորմամբ, որ Թուրքիայի մահմեդական բոլոր փոքրամասնությունները, լինեն դրանք քրդեր, արաբներ, լազեր, չերքեզներ և այլն, Թուրքիայի քաղաքացիներ են, հետևաբար նրանց խնդիրը ներքին հարց է: Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հարցի քննարկումների ժամանակ թուրքական պատվիրակությունը քրդական հարցի կապակցությամբ ընդունեց հետևյալ որոշումը. քրդերը Թուրքիայում օգտվում են բոլոր իրավունքներից և չեն ցանկանում առանձնանալ: «Անատոլիայի քրդերը,- հայտարարեց թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուն,- պատրաստ են թուրքերի հետ կողք կողքի, զենքը ձեռքին պայքարելու Քրդստանը Թուրքիայից անջատելու ամեն մի փորձի դեմ»<sup>21</sup>: Իսմեթ փաշան կոնֆերանսում նաև հայտարարեց, որ Թուրքիան պատկանում է երկու ժողովուրդների՝ թուրքերին ու քրդերին, որոնք իրավահավասար են և օգտվում են միևնույն իրավունքներից<sup>22</sup>:

Լոզանում ինչպես Հայկական, այնպես էլ քրդական հարցերը զոհասեղանին դնելով հանուն քեմալական իշխանությունների հետ հարաբերությունների կարգավորման՝ կոնֆերանսին մասնակից պետությունները օրակարգից հանեցին նաև քրդերին վերաբերող հարցը: Լորդ Քերզընը հայտարարեց, որ «այլևս գոյություն չունի Թուրքիայում քրդական պետության կամ քրդական ինքնավար նահանգի ստեղծման հարց, ինչպես ենթադրվում էր Սևրի պայմանագրում»<sup>23</sup>:

Լոզանի պայմանագիրը պարունակում էր մի հատուկ բաժին, որը վերնագրված էր «III բաժին. փոքրամասնությունների պաշտպանությունը» (հոդվ. 38-45): 38-րդ հոդվածում ասվում էր. «Թուրքական կառավարությունը պարտավորվում է Թուրքիայի բոլոր բնակիչներին տրամադրել իրենց կյանքի ու ազատության համապարփակ ու կատարյալ պաշտպանություն առանց ծագման, ազգության, լեզվի, ռասայի կամ կրոնի տարբերության»<sup>24</sup>: Սակայն պայմանագրի նշված հոդվածներում փոքրամասնությունների իրավունքների իրավաբանական երաշխիքների վերաբերյալ կետերում խոսքը բացառապես ոչ մահմեդական փոքրամասնությունների մասին էր: Պայմանագիրը չէր ճանաչում ոչ թուրք մահմեդականների, այդ թվում նաև քրդերի «փոքրամասնություն» լինելու կարգավիճակը<sup>25</sup>:

Լոզանի կոնֆերանսից հետո քեմալականների քրդական քաղաքականության մեջ տեղի ունեցավ կտրուկ շրջադարձ: Այդ առթիվ քուրդ ազգային գործիչ Քյամուրան Բադրխանը գրում էր. «Լոզանի պայմանագիրը դեռ նոր էր ստորագրվել, երբ Մուստաֆա Քեմալը կտրուկ շրջադարձ կատարեց համագործակցության քաղաքականությունից դեպի իր խոստում-

<sup>20</sup> St' u **Мустафа Кемаль**. Победа новой Турции. 1921–1927. Т. IV. М., 1934, էջ 140:

<sup>21</sup> Архив внешней политики Российской империи, ф. НАИ, серия А, д. 26, л. 86–93.

<sup>22</sup> St' u **Beşikçi, I.** Doğu Anadolunun Düzeni, 2 baskı, İstanbul, 1970, էջ 288:

<sup>23</sup> DBFP, 1919-1939, vol. XIII, № 289, p 405.

<sup>24</sup> "Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне". М., 1927, с. 145.

<sup>25</sup> St' u նույն տեղը, էջ 152-154:

ների և ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ թուրքական կառավարության նույնիսկ պայմանագրային պարտավորությունների դրժումը... Երբ թուրքերին հիշեցրին ժամանակին տրված խոստումների մասին, նա (Մուստաֆա Քեմալը - Վ. Բ.) հրամայեց փակել դպրոցները և բանտարկել հայրենասերներին ու ազդեցիկ դեմքերին: Նորից սկսեցին գործել ապօրինություններ... Մի քանի նախկին պատգամավորներ ձերբակալվեցին ու հանձնվեցին ռազմադաշտային դատարանին: Ամբողջ Քրդստանում սկսեցին իրականացվել բռնություններ»<sup>26</sup>:

1923 թ. հոկտեմբերի 18-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ) ընդունեց «ավազակային շարժումները ճնշելու վերաբերյալ» օրենք, որը կառավարությանը հնարավորություն էր տալիս ցանկացած շարժում որակել որպես «ավազակային-բանդիտական» և անողորմ դաժանությամբ ճզմել այն: Կասկածից վեր է, որ այդ օրենքն իր սուր ծայրով ուղղված էր քրդական շարժումների դեմ:

1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան հռչակվեց հանրապետություն: Թուրքական հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Մուստաֆա Քեմալ փաշան: Այսպիսով, քեմալականների պայքարը պսակվեց հաջողությամբ, և Օսմանյան կայսրության փլատակների վրա առաջացավ նոր պետություն:

1924 թ. ապրիլի 20-ին ընդունված Թուրքիայի Հանրապետության առաջին սահմանադրությունը տողորված էր թունդ ազգայնական ոգով: Այն չէր ճանաչում ոչ թուրք ժողովուրդների ազգային իրավունքները, օրենսդրորեն վավերացնում էր թուրքական կառավարող շրջանների որդեգրած ազգայնական (նացիոնալիստական) քաղաքականությունը ազգային հարցում: Քեմալական ազգայնականությունը խարսխվում էր այն համոզման վրա, որ երկրում բնակվող յուրաքանչյուր մարդ, որ չի պատկանում թուրք ազգին, լինի նա քուրդ, հայ, թե հրեա, պարտավոր է դառնալ թուրք: Սույն դրույթն արտացոլվեց սահմանադրության 88-րդ հոդվածում, որտեղ ասվում էր. «Թուրք է հանդիսանում Թուրքիայի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր անձ՝ առանց ազգության ու հավատքի տարբերության»<sup>27</sup>: Այս դրույթը պահպանվեց նաև հանրապետության երկրորդ՝ 1961 թ. և երրորդ՝ 1982 թ. սահմանադրությունների մեջ: Հանրապետության ղեկավարությունը որդեգրեց երկրի բնակչության միատարրության, լեզվի, մշակույթի և մտածելակերպի միասնականացման ուղեգիծը: Այդ քաղաքականության դրսևորման օրինակ կարող է ծառայել 1925 թ. այսպես կոչված «Թուրք օջախների» համագումարում Թուրքիայի «երկրորդ մարդը» հորջորջված վարչապետ Իսմեթ Ինենյուլի հայտարարությունը. «Մենք անթաքույց ու բաց ազգայնականներ ենք: Ազգայնականությունը մեր գործունեության միակ գործոնն է: Մենք պետք է ամեն զնով թրքացնենք բոլորին, որոնք ապրում են մեր հասարակության մեջ»<sup>28</sup>: Ազգային ինքնության իմաստավորումը Թուրքիայում փաստորեն վերաճեց արմատական ազգայնականության կամ ավելի ճիշտ՝ ազգայնամոլության: Կասկածից վեր է, որ թուրքական ազգային պետության ստեղծումն ուղեկցվում էր Անատոլիայի

<sup>26</sup> Bedir-Khan C. La Question Kurde, Paris, 1959, p. 10.

<sup>27</sup> "Конституции государств Ближнего и Среднего Востока". М., 1956, с. 515.

<sup>28</sup> Колесников А. Народные дома в общественно-политической и культурной жизни Турецкой Республики. М., 1986, с. 65.

հայ և հույն բնակչության կոտորածներով ու տեղահանությամբ, քրդական բնակչության հանդեպ կիրառվող զտումների քաղաքականությամբ, թուրքերենի միասնականացման և մաքրման ընթացքով: Հանրապետական-ժողովրդական կուսակցության գլխավոր քարտուղար Ռեջեփ Թեքերը ազդարարում էր, որ թուրք կարող են համարվել թուրքիայի բոլոր այն բնակիչները, այդ թվում՝ և՛ քրիստոնյա ու հրեա փոքրամասնությունները, եթե նրանք խոսում են թուրքերեն և դավանում են թուրքական իդեալներին<sup>29</sup>:

Միանգամայն ակնհայտ է, որ թուրքիան չկարողացավ ազգային ինքնության հաստատման ընթացքում խուսափել էթնոկենտրոն ինքնասահմանափակումից, որը պարունակում էր ազգային բացառիկության և ազգայնամոլական ուժեղ շեշտադրումներ: Իթթիհադականներից ժառանգելով ազգային փոքրամասնությունների հանդեպ տարվող քաղաքականությունը՝ քեմալիզմը «Թուրքիան թուրքերինն է» կարգախոսը տիրապետող դարձրեց թուրքերի ազգային մտածելակերպի մեջ: Քեմալ Աթաթյուրքը և նրա զինակիցները հստակ հետևում էին իրենց այն մտայնությանը, որ թուրքիայի հանրապետության կայունության և ուժի համար մեծ մասամբ պարտական են երկրի բնակչության միատարրությանը, որը ձեռք էր բերվել բռնի թրջացման քաղաքականության շնորհիվ<sup>30</sup>:

Այդ քաղաքականությունը ունեցավ այն հետևանքը, որ Արևելյան Անատոլիայի առանձին վայրերում սկսվեցին քրդական տարերային ապստամբություններ, խռովություններ, քաղաքացիական անհնազանդության դրսևորումներ և այլն: 1925 թ. փետրվարի 8-ին արևելյան վիլայեթներում բռնկեց քրդական մի հուժկու ապստամբություն շեյխ Սայիդի գլխավորությամբ, որն իր թափով և կազմակերպվածությամբ տարբերվում էր նախորդ բոլոր քրդական շարժումներից: Կարճ ժամանակամիջոցում այն ընդգրկեց թուրքիայի համարյա ողջ քրդաբնակ շրջանները՝ 14 վիլայեթ: Ապստամբների թիվը հասավ մոտավորապես 40 հազ. մարդու: Նրանք մտադիր էին ստեղծել անկախ քրդական պետություն՝ Դիարբեքիր մայրաքաղաքով: Քրդերեն իրենց առջև դրել էին հետևյալ քաղաքական խնդիրը՝ ռազմական ճանապարհով հասնել միացյալ անկախ Քրդստանի ստեղծմանը՝ հենվելով գլխավորապես սեփական ուժերի վրա<sup>31</sup>:

1925 թ.-ին թուրքիայի քրդաբնակ շրջաններում ստեղծվեց «Քրդստանի անկախության կոմիտե», որի գործուն անդամներից էր Քրդստանում մեծ ազդեցություն ունեցող Նաքշբենդի (Նաքշբանդիյա) սուֆիական միաբանության ղեկավար, քրդական փիրանի ցեղից սերած շեյխ Սայիդը<sup>32</sup>: Թուրքական կառավարության կողմից՝ «Քրդստանի անկախության կոմիտեի» ջախջախումից հետո նա դարձավ շարժման միանձնյա ղեկավարը<sup>33</sup>:

Ապստամբության հիմնական օջախը գտնվում էր Վանա լճից արևմուտք ընկած շրջանում: Թուրքական կառավարությունը ապստամբների դեմ նետեց 70 հազարանոց մի բանակ<sup>34</sup>: Անկարան շեյխ Սայիդի ապստամբությու-

<sup>29</sup> Տե՛ս Tekin Alp, *Kemalizm*, Ankara, 1954, էջ 253:

<sup>30</sup> Տե՛ս Ս. **Բադդասարյան**, *Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թվականներին*, Եր., 2001, էջ 64:

<sup>31</sup> Տե՛ս **Лазарев М. С.** *Империализм и курдский вопрос (1923–1945)*. М., 2005, էջ 47:

<sup>32</sup> Տե՛ս "The Massacres of Kurds in Turkey". Publication of the Kurd's National League Hoyboun, Cairo, 1928, էջ 8:

<sup>33</sup> Տե՛ս **Toker M.** *Şeyh Sait ve İsyanı*, Ankara, 1968, էջ 35-37:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 37:



ըն որակեց «քրդերի կրոնական մոլեռանդության պայթյուն»՝ միաժամանակ քարոզելով, որ քրդերն ապստամբել են օտարերկրյա տերության (հմա՝ անգլիացիների) սադրանքների հետևանքով<sup>35</sup>: Կառավարությունը մեղադրեց նաև 1924 թ. Թուրքիայում ստեղծված ընդդիմադիր Առաջադիմական հանրապետական կուսակցությանը՝ քրդական ապստամբությունը հրահրելու և նյութապես օժանդակելու մեջ և արգելեց նրա գործունեությունը<sup>36</sup>:

Ապստամբության շրջանում Անկարան հետևողականորեն աշխատում էր հորհրդային Միության ղեկավարներին ևս ներշնչել հակաքրդական տրամադրություններ՝ քրդական ազգային շարժումը ներկայացնելով որպես պրոհիմպերիալիստական, արևմտամետ, գործակալական<sup>37</sup>:

Թուրքական կառավարությունը լուրջ ճգնաժամի մեջ էր: 1925 թ. մարտի 3-ին տեղի ունեցավ կաբինետի փոփոխություն: Վարչապետ Ֆեթհի-բեյին փոխարինելու եկավ Իսմեթ Ինենյուն, որը հենց հաջորդ օրը մեջլիսում ընդունել տվեց ապստամբությունը ճնշելու վերաբերյալ մի համալիր ծրագիր, որը նախատեսում էր այսպես կոչված «անկախության դատարանների ստեղծում», ապստամբած շրջաններում ռազմական դրության հայտարարում, մամուլի նկատմամբ խիստ զրաքննություն և առանձին թերթերի փակում, «կարգի ու հանգստության հաստատման վերաբերյալ օրենքի» ընդունում և այլն: Ծրագիրը թույլ էր տալիս կառավարությանը ապստամբների նկատմամբ կիրառել զանգվածային ահաբեկչության մարտավարություն, անխնա կրակի մատնել քրդական բնակավայրերը, հիմնովին զինաթափել քրդերին, քուրդ բնակչությանը տեղահանել իրենց բնակավայրերից դեպի երկրի տարբեր շրջաններ<sup>38</sup>:

1925 թ. ապրիլի վերջին կառավարական զորքերին հաջողվեց շրջապատել ու ջախջախել ապստամբներին: Շարժման 53 ղեկավար, այդ թվում նաև շեյխ Սայիդը, Դիարբեքիում կախաղան բարձրացվեցին<sup>39</sup>: Անատոլիայի դաշտերն ու բլուրները պատված էին ապստամբների դիակներով, նրանց գյուղերը դարձան կրակի ճարակ և հիմնովին ոչնչացվեցին<sup>40</sup>: Չէին խնայում ոչ ոքի՝ ոչ կանանց, ոչ ծեղերին և ոչ էլ երեխաներին: «Վրեժ լուծելով քրդերից,- վկայում է անգլիացի Զ. Արմստրոնգը,- թուրքերը կազմակերպեցին արյունալի կոտորած: Ընդ որում, իր վայրագությամբ ու արյունախում վարքագծով նրանք չէին զիջում սուլթանության ժամանակների թուրքերին, որոնք անխնա կոտորում էին հայերին, հույներին ու բուլղարներին: Դատարանների վճիռներով քրդերին կախում էին, արքունում և բանտերը նետում զուտ զինվորական արագությամբ»<sup>41</sup>:

1925-1926 թթ. ընթացքում թուրքական զորքերն ավերեցին 206 քրդական գյուղ, այրեցին 8758 տուն, սպանեցին 150 հազարից ավելի խաղաղ բնակիչ, գրում է ֆրանսիացի Ռամբոն<sup>42</sup>: Վանի, Դիարբեքիի, Եյազիզի,

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 22:

<sup>36</sup> Տե՛ս **Վ. Տեր-Մաթևոսյան**, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, Եր., 2008, էջ 33:

<sup>37</sup> Տե՛ս **Վ. Բայբուրդյան**, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008, էջ 345:

<sup>38</sup> Տե՛ս "Düstür", cilt 16, Ankara, 1934, էջ 107:

<sup>39</sup> Տե՛ս **Armstrong H. C.** Grey Wolf. Mustafa Kemal. London, 1934, էջ 266:

<sup>40</sup> Տե՛ս **Gentizon P.** Mustafa Kemal ou L'Orient en Marche, Paris, 1929, էջ 83:

<sup>41</sup> **Armstrong H. C.** նշվ. աշխ., էջ 26:

<sup>42</sup> Տե՛ս **Rambout.** Les Kurdes et le Droit, Paris, 1947, էջ 28:

Մուշի, Բիթլիսի և այլ վայրերի քուրդ բնակչության մի զգալի մասը տարագրվեց Անատոլիայի խորքերը: Այդ ընթացքում ճանապարհներին սովից, հիվանդություններից ու հոգնածությունից մեծ թվով քուրդ երեխաներ մահացան, իսկ շատերին աչքից հեռու վայրերում պարզապես սպանում էին<sup>43</sup>: 1400 հոգուց բաղկացած տարագրյալների մի խմբից Էրզրումից Տրապիզոն, իսկ այնտեղից ծովով Թրակիա տեղափոխելու ճանապարհին կենդանի մնացին միայն 400 հոգի<sup>44</sup>:

Օգտվելով առիթից՝ թուրքական իշխանությունները հաշվեհարդար էին տեսնում ոչ միայն ապստամբության մասնակիցների, այլև առավել ազդեցիկ քրդերի հետ, որոնք չեզոք պահվածք էին որդեգրել քեմալականների նկատմամբ: Այսպես, ԹԱՄԺ-ի պատգամավոր, քրդական մտավորականության ներկայացուցիչ Հասան Խայրին թեև չէր մասնակցել ապստամբությանը, այլ, ընդհակառակը, նամակներ էր հղում ապստամբներին՝ հորդորելով պահպանել հանգստություն, սակայն Մուստաֆա Քեմալի հրամանով նրան ձերբակալեցին և դատեցին: Անկախության դատարանի նախագահը հետաքննության ժամանակ նրան ներկայացրեց հետևյալ մեղադրանքը. «Անկարայում մեջլիսի նիստերին դուք ներկայանում էիք քրդական տարագրված դրանով իսկ քարոզելով քուրդիզմ»<sup>45</sup>: Այդ անհեթեթ մեղադրանքի հիման վրա դատարանը Հասան Խայրին դատապարտեց մահվան:

Հետաքրքիր է նշել, որ շեյխ Սայիդի ապստամբությանը իրենց եռանդուն մասնակցությունն էին բերել նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի հայ, ասորի և չերքեզ բնակիչները: 1925 թ. սեպտեմբերի 26-ին Դիարբեքի անկախության դատարանը մահվան դատապարտեց Չմշկածափ բնակիչ Մակարի որդի դարբին Պողոսին, որը մեղադրվեց քրդական ապստամբությանը եռանդուն մասնակցություն ունենալու և Խարբերդում ապստամբների օգտին լրտեսությամբ զբաղվելու մեջ<sup>46</sup>: Ընդ որում, «Հաքիմիեթի միլիտե» թերթը գրում էր, որ հայ և ասորի կամավորները միանում էին ապստամբներին՝ ապագայում անկախ Հայաստան ստեղծելու համար<sup>47</sup>: Չգտելով թուրքերի, քրդերի, հայերի և ասորիների միջև բորբոքել ազգային թշնամանք՝ թուրքական բանակային կորպուսի հրամանատարը նահանգապետերին հղեց մի շրջաբերական նամակ, որտեղ ասվում էր. «Մեր դեմ անզուսպ վրիժառության զգացումներով ներշնչված՝ հայերն անկասկած սպասում են հարմար առիթի... որպեսզի մեր մահմեդական ռասայի ոսկորների վրա ստեղծեն նոր Հայաստան»: Նամակում ասվում էր, որ գերի ընկածների մեջ կան հայ և ասորի կամավորներ: Որ նրանց մոտ գտնվել են փաստաթղթեր, որոնք վկայում են հայերի և ասորիների հետ շեյխ Սայիդի համագործակցության մասին: Վերջում հրամանատարը պահանջում էր՝ «օգտվել ցանկացած առիթից՝ բնակչությանը այդ մասին տեղեկացնելու համար»<sup>48</sup>:

<sup>43</sup> Տե՛ս **Dersimi Nuri**, Kurdistan Tarihinde Dersim, էջ 205.

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 206:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>46</sup> Տե՛ս "İstanbul", 28 սեպտեմբերի 1925 թ.:

<sup>47</sup> Տե՛ս "Hakimiyeti Milliye", Ankara, 2 մարտի 1925 թ.:

<sup>48</sup> "Gazet", İstanbul, 15 մարտի 1925 թ.:

Թուրքական այդ սադրանքներին հակադարձելու նպատակով շեյխ Սալիդը հրապարակեց հրամանագիր, որտեղ ասվում էր. «Ով թեկուզ մատով դիպչի հայերին, նա կենթարկվի ամենադաժան պատժի»<sup>49</sup>:

Շեյխ Սալիդի ապստամբությունից հետո թուրքերի և քրդերի միջև բացվել էր շատ խորը մի անդունդ: Հաշտության եզր այլևս չէր մնացել: Ողջ քրդությունը վառված էր ատելությամբ ու վրեժխնդրությամբ: Թուրք-քրդական հարաբերությունները ծայրահեղ լարվածության էին հասել:

1920-ական թվականների երկրորդ կեսին Թուրքիայի ողջ քրդաբնակ շրջաններում ընթանում էին պարտիզանական թեժ կռիվներ: 1925 թ. հունիս-հուլիսին իրանահրաքյան սահմանի հարևանությամբ՝ Հաքյարիում, քրդերը պարզեցին ապստամբության դրոշ: Վանի և Բիթլիսի շրջաններում ծավալվեցին թեժ մարտեր քրդական ապստամբների և կառավարական զորքերի միջև: 1926 թ. աշնանը ջեյլալի, հասանան, ջիբրան և հայդարան ցեղերը, նահանջելով դեպի Արարատ լեռը, բարձրացրին նոր ապստամբություն: Մեծ և Փոքր Արարատների միջև ընկած թամբարդը, որը թուրքերն անվանում են Քիրե, դարձավ քրդական ապստամբական նոր շարժման գլխավոր օջախը և հենակետը: Այստեղ սկսեցին կենտրոնանալ մեծ թվով քրդական ջոկատներ: Ողջ 1926-1927 թթ. ընթացքում այդ ջոկատները հանդուգն մարտարշավներ էին կազմակերպում դեպի Խնուսի, Վարդոյի, Մուշի, Սուլեյմանի, Ճապաղջրի, Գենջի, Լիջեի և այլ շրջաններ: Թուրքական կառավարությունը ապստամբների դեմ հանեց խոշոր ռազմական ուժեր, այդ թվում նաև՝ մեծ քանակությամբ ինքնաթիռներ, որոնք գործում էին Արարատի, Իգդիրի և Բայազետի (Դողուբայազետ) ուղղություններով: Կատաղի մարտերի հետևանքով թուրքերը տվեցին 2 հազ. սպանված: Քրդերը վերցրին 400 գերի, զավթեցին 12 հրանոթ, 36 գնդացի և այլ ռազմավար<sup>50</sup>: Ապստամբությունը ընդգրկեց Վանի, Մանազկերտի, Մուշի, Բիթլիսի և Սղերդի շրջանները: Ապստամբների դեմ հսկայական ռազմական ուժեր օգտագործելուց զատ թուրքական իշխանությունները սկսեցին լայնորեն կիրառել նաև վարչական միջոցառումներ: Այսպես, 1927 թ. հունիսի 19-ին ԹԱՄԺ-ը ընդունեց № 1097 օրենքը քրդերին երկրի արևելյան վիլայեթներից արևմտյան վիլայեթներ տեղահանելու վերաբերյալ<sup>51</sup>: Ընդ որում, արևելագետ Վ. Նիկիտինի վկայությամբ, այդ բռնի տեղահանությունը իրագործվում էր ճիշտ նույն մեթոդներով, ինչպես հայերի տեղահանությունը (վտարումը, արտաքսումը) առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ<sup>52</sup>:

Ի լրումն վերոհիշյալ օրենքի՝ ընդունվեց նաև № 1178 օրենքը, որտեղ ասվում էր, որ մինիստրների խորհրդին իրավունք է վերապահվում առաջնորդվել № 1097 օրենքի դրույթներով նաև այն անձանց նկատմամբ, ովքեր չեն մասնակցել շեյխ Սալիդի ապստամբությանը և հետագա իրադարձություններին<sup>53</sup>: Միաժամանակ արևելքի քրդաբնակ շրջաններում կառավարությունը ստեղծեց, այսպես կոչված, «կարգի ու անվտանգության ա-

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Տե՛ս **Կ. Սասունի**, Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները (Ժե դարեն մինչև մեր օրերը), Պեյրուս, 1969, էջ 270:

<sup>51</sup> Տե՛ս **Kökdemir N.** Eski ve yeni toprak, iskan hükümleri ve uygulama klavuzu, Ankara, 1952, էջ 28-30.

<sup>52</sup> Տե՛ս **Никитин В.** Курды. М., 1964, էջ 90:

<sup>53</sup> Տե՛ս "Düstür", Ankara, 1928, cilt IX, kis. 1, էջ 13:

պահովման» գլխավոր տեսչություններ, որոնց վրա դրվում էին պատժիչ ֆունկցիաներ: Տեղական իշխանության բոլոր մարմինները պարտավոր էին ենթարկվելու այդ տեսչություններին: Նրանց իրավունք էր վերապահված տվյալ տարածքում հայտարարել ռազմական դրություն, տեղակայված զորքերից մերձակա վայրերում հրավիրել ջոկատներ՝ քուրդ բնակչության ապստամբական շարժումները ճնշելու նպատակով և այլն:

Արարատի շրջանում քրդական ապստամբական շարժումը նախապատրաստել էր «Հոյբուն» («Անկախություն») ռազմաքաղաքական կոմիտեն, որը ստեղծվել էր 1927 թ. օգոստոսին Սիրիայում և Լիբանանում տեղի ունեցած քրդական կազմակերպությունների համագումարում<sup>54</sup>: Այստեղ ձևակերպվեց «Հոյբունի» քաղաքական ուղեգիծը, և մշակվեց նրա կանոնադրությունը: «Հոյբունը» ըստ էության վերածվեց քաղաքական կուսակցության: Այն նպատակ էր հռչակում թուրքական Քրդստանի անկախությունը: Կուսակցության յուրաքանչյուր անդամ տալիս էր «եղբայրության ուխտ» կամ երդում՝ պայքարելու հանուն անկախ Քրդստանի ստեղծման: Քրդական հարցի վերաբերյալ Թուրքիայի սահմաններից դուրս քարոզչություն ծավալելու նպատակով «Հոյբունը» արտասահմանում՝ Սիրիայում, Լիբանանում, Եվրոպայի մի շարք երկրներում և ԱՄՆ-ում, ստեղծեց մասնաճյուղեր: Կուսակցության ծրագրում հատկապես կարևորվում էր «Իրանական կառավարության և եղբայրական իրանական ժողովրդի հետ մշտական եղբայրական հարաբերություններ հաստատելու հարցը»:

«Հոյբունի» գործունեությանը եռանդուն աջակցում էր սփյուռքում գործող Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: Քուրդ հետազոտող Ա. Ղասեմլուն գրում է, որ «Հոյբունը» գտնվում էր դաշնակցության անմիջական ազդեցության ներքո, որը նրան ցուցաբերում էր «քաղաքական, կազմակերպչական և նյութական աջակցություն»<sup>55</sup>: «Հոյբունը» հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «Համագումարը կը հայտարարե հրապարակավ, որ Հայաստանը և Քուրդիստանը, ուր դարերով բնակած են այս երկու ժողովուրդները, կը մերժեն ենթարկվիլ որևէ օտար իշխանության, ձգտելով իրենց անկախության: Եվ որ այդ երկու երկրները կը պատկանին միայն հայ և քուրդ ժողովուրդներուն»<sup>56</sup>:

Թուրքական կառավարությունը թշնամական դիրքորոշում որդեգրեց հայ-քրդական համագործակցության հանդեպ՝ հանձին դրա տեսնելով լուրջ սպառնալիք Թուրքիայի ազգային անվտանգությանը: Անկարայում լույս տեսավ պաշտոնական «Հոյբուն-Դաշնակ» գրքույկը, որտեղ արժարժվում էր այն միտքը, որ շեյխ Սայիդի ապստամբության ճնշումից հետո քրդական շարժումը «վերակենդանացավ» շնորհիվ «Հոյբունի» և դաշնակցության համագործակցության: Թուրքիայում քրդական շարժումը աստիճանաբար հրաժարվում էր կրոնական կարգախոսներից և առաջնորդվում էր հիմնականում ազգային մոտիվներով: Իսկ Անկարան ավելի ու ավելի էր կոշտացնում իր ազգայնամոլական քաղաքականությունը այդ

<sup>54</sup> Տե՛ս **Silopi Z.** Doza Kurdistan (ա. տ.), 1969, էջ 110: Տե՛ս նաև՝ **Bois, Pere Thomas.** Connaissance des Kurdes, Khayats, Beirut, 1965, էջ 48-49:

<sup>55</sup> **Ghassemliou A. R.** Kurdistan and the Kurds, Prague, 1965, p. 53-54.

<sup>56</sup> **Կ. Սասունի,** Քյուրտ ազգային շարժումները, էջ 263-264: Տե՛ս նաև՝ **Акопов А.** Курдский вопрос и дашнаки // "Большевик Закавказья", 1931, № 2, էջ 38:

հարցում: Այսպես, 1928 թվականին Թուրքիայում հրապարակվեց № 1312 օրենքը, որի 4-րդ հոդվածում ասվում էր, որ «1929 թ. հունվարի 1-ից այն երեխան, որ ծնվում է Թուրքիայի հողում օտարերկրացի (այլազգի) ծնողներից, թուրք է»<sup>57</sup>: 1930 թ.-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ընդունվեց օրենք, որը կառավարությանը իրավունք էր տալիս ոչ թուրքերին բնակեցնել թուրք բնակչության մեջ, որպեսզի «նրանք յուրացնեն թուրքերենը և թուրքական մշակույթը»<sup>58</sup>: 1930 թ. օգոստոսի 30-ին՝ երկաթուղու բացման արարողության ժամանակ, Էլույթ ունենալով Սըվասում, Իսմեթ Ինենյուն հայտարարեց. «Այս երկրում միայն թուրք ազգը կարող է ներկայացնել էթնիկական և ռասայական իրավունքների վերաբերյալ պահանջներ: Ոչ մի այլ տարր նման իրավունքներ չունի»<sup>59</sup>:

1931 թ.-ին թուրքական կառավարությանը հաջողվեց մեծ դժվարությամբ ճնշել Արարատի շրջանի քրդական ապստամբությունը, որը տևեց հինգ տարի՝ 1927-1931 թվականները: Ապստամբությունը ճնշելուն հետևեց դաժան հաշվեհարդարը ոչ միայն ապստամբների, այլև առհասարակ քրդերի նկատմամբ: 1932 թ. մայիսի 22-ին թուրքական դատարանը Արարատի շրջանի ապստամբության մասնակիցներից 30 հոգու դատապարտեց մահվան, 58 հոգու՝ տարբեր ժամկետներով բանտարկության: Թուրքական պատժիչ զորամասերը կազմակերպում էին զանգվածային կոտորածներ, տեղահանություններ: «Յոյբունի» տվյալներով սպանված ապստամբների թիվը հասնում էր 10-15 հազ. մարդու, ավերվել էր 660 գյուղ: Միայն Արճեշի շրջանում այրվել էր 200 գյուղ: Պատմոցի տարածքում ոչ մի գյուղ չէր մնացել<sup>60</sup>: Թուրքական զորքերը քրդերից բռնագրավում և քշում-տանում էին նրանց անասունները: Քրդերենը պաշտոնապես արգելվեց, քրդական հրատարակությունները բռնագրավվեցին ու այրվեցին: Դասագրքերից իսպառ հանվեցին «քուրդ», «Քրդստան» բառերը: Վերջապես Քրդստանը մեկուսացվեց մնացած աշխարհից, և օտարերկրացիների մուտքն այնտեղ խստիվ արգելվեց<sup>61</sup>:

1930 թ. նոյեմբերի 1-ին, հանդես գալով ԹԱՄԺ-ի նիստում, Մուստաֆա Քեմալը հայտարարեց, որ Թուրքիայի արևելքում տեղի ունեցող իրադարձությունները «սպառնալիք էին մեր անկախությանը»<sup>62</sup>: Իսկ արդարադատության նախարար Մահմուդ Էսադ-բեյը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Մենք ապրում ենք Թուրքիայում, աշխարհի ամենաազատ երկրում: ... Թուրքը այս երկրի միակ տերն է: Ծագումով ոչ մաքուր թուրքերը (իմա՝ քրդերը – Վ. Բ.) այս երկրում ունեն միայն մեկ իրավունք՝ լինել ծառաներ ու ստրուկներ: Այս ճշմարտությունը թող հիշեն և՛ բարեկամը, և՛ թշնամին, թող այն իմանան նույնիսկ լեռները»: Իսկ «Միլլիեթ» թերթը տպագրեց մի նկար. Արարատ լեռան վրա պատկերված էր մի գերեզման, որի տապանաքարի վրա գրված էր. «Այստեղ թաղված է ենթադրյալ Քրդստանը»<sup>63</sup>:

<sup>57</sup> "Belediye ve köylerimiz kitabı", Ankara, 1932, s. 865.

<sup>58</sup> Колесников А., **Նշվ. աշխ.**, с. 65.

<sup>59</sup> "Milliyet", 31. 08. 1930.

<sup>60</sup> Տե՛ս **Васильев К.** Причины и движущие силы курдских восстаний // "Аграрные проблемы", 1931, № 9–10, էջ 111:

<sup>61</sup> Տե՛ս **Gavan S. S.** Kurdistan: divided nation, էջ 26:

<sup>62</sup> "Atatürkün söylev ve demeçler", cilt 1, İstanbul, 1945, s. 349.

<sup>63</sup> **Bedirhan C. A.** Mektub Türkiye Reiscumhur Gazi Mustafa Paşa hazretlerine, 1933, s. 76.

Բացահայտելով Արարատի շրջանի քրդերի ապստամբությունը ճնշելու քաղաքական կարևորությունը Թուրքիայի համար՝ թուրք քաղաքական և ռազմական գործիչ Մեհդի Սադրեդդին-բեյը 1930 թ.-ին արել էր հետևյալ հայտարարությունը. «Այսօր Իրանը, Իրաքը, Սիրիան, նրանցից յուրաքանչյուրը դարձել են մեր թշնամիների բույնը: Որպեսզի այդ երկու հազար կիլոմետրանոց սահմանի վրա պահենք զորքերի մի անընդմեջ շղթա, մեզ անհրաժեշտ է այդ վայրերում մշտապես ունենալ 25 հազ. զինվոր, որը ներկա պայմաններում մեր հնարավորություններից վեր է: Ահա թե ինչու անհրաժեշտ էր արմատապես լուծել արարատյան պրոբլեմը: Իսկ դրա համար պետք է, որ Փոքր Արարատը ամբողջապես գտնվի մեր ձեռքերում»<sup>64</sup>:

Թուրքիայի քուրդ բնակչության նկատմամբ Անկարայի կիրառած պետական ահաբեկչության քաղաքականությունը այն աստիճանի ակներև էր, որ նույնիսկ խորհրդային մամուլը, որն ավանդաբար վերին աստիճանի զգույշ էր «բարեկամ» Թուրքիայի վերաբերյալ իր հրապարակումներում, անդրադարձավ այդ հարցին<sup>65</sup>: Իսկ երկրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն 1930 թ. օգոստոսին ընդունեց մի որոշում, որտեղ ասվում էր. «Գործադիր կոմիտեն համաշխարհային հասարակական կարծիքի ուշադրությունը հրավիրում է այն սպանությունների վրա, որոնց միջոցով թուրքական կառավարությունը ցանկանում է ոչ միայն ոչնչացնել իրենց անկախության համար պայքարող քրդերին, այլև բնաջնջել խաղաղ քուրդ բնակչությանը, որը մասնակցություն չի բերել ապստամբությանը: Այդ միջոցառումներով թուրքական կառավարությունը փորձում է քուրդ ժողովրդին ենթարկել այն նույն ճակատագրին, ինչ նա իրականացրել է հայերի նկատմամբ»<sup>66</sup>:

1932 թ. ընթացքում Թուրքիայի Ազգային մեծ ժողովն ընդունեց օրենքների մի ամբողջ փաթեթ, որն անմիջականորեն ուղղված էր քրդերի դեմ: Այսպես, բնակչության նստակեցության վերաբերյալ օրենքը<sup>67</sup> սահմանափակում էր քրդերի ազատ տեղաշարժվելու իրավունքը: 1932 թ. մայիսի 5-ին ընդունված մեկ այլ օրենքի համաձայն՝ երկրի արևելյան և հարավարևելյան քրդաբնակ շրջաններում ստեղծվում էր մի հատուկ գոտի, որը կոչվելու էր «Երրորդ գլխավոր տեսչություն»: Նրա կազմի մեջ էին մտնելու Էրզրումի, Կարսի, Ռիզեի, Տրապիզոնի, Գյումուշանեի, Էրզինջանի և Ադրիի վիլայեթները: Նշված նահանգների բնակչությունը «սանիտարական, նյութական, մշակութային, քաղաքական և ռազմավարական նկատառումներով, ինչպես նաև այդ վայրում կարգ ու կանոնը պահպանելու շահախնդրությամբ ենթակա էր էվակուացման (տարհանման) և տարաբնակեցման այլ վայրերում»<sup>68</sup>: «Երրորդ գլխավոր տեսչության» շրջանը հայտարարվեց փակ գոտի, այսինքն՝ ոչ ոք չէր կարող այնտեղ բնակություն հաստատել առանց զինվորական իշխանությունների թույլտվության: Նշված օրենքի երկրորդ կետում ասվում էր, որ այլ վայրեր տեղափոխված քրդերը պետք է բնակեցվեին թուրք բնակչության շրջանում այն հաշվով,

<sup>64</sup> «Նոր օր» լրագիր, 15 օգոստոսի 1930 թ.:

<sup>65</sup> Տե՛ս "Заря Востока", 20. 03. 1931 г.:

<sup>66</sup> "Меморандум Исполкома II Интернационала". Август, 1930 г., с. 18.

<sup>67</sup> Տե՛ս «Չայրենիք», № 9 (117), հատ. X, հուլիս, Բոստոն, 1932, էջ 167:

<sup>68</sup> **Rambout L.** Les Kurdes et le Droit, Paris, 1947, p. 32-43.

որ իրենց թվաքանակով չզերազանցեին տեղական թուրք բնակչության 10 %-ը: Ի դեպ, քրդերի վերաբերյալ նմանատիպ օրենք ժամանակին ընդունել էին նաև իթթիհադականները<sup>69</sup>:

1932 թ. նշված օրենքի 6-րդ և 7-րդ կետերը քրդերին զրկում էին իրենց լեզվից օգտվելու իրավունքից, սեփական մշակութային, քաղաքական, լուսավորական կազմակերպությունները ունենալուց: Այդ օրենքը քրդերին պաշտոնապես առաջին անգամ անվանում էր «լեռնային թուրքեր»: Քրդերին արգելվում էր կրել ազգային տարազ, արգելք էր դրվում քրդական բանահյուսության վրա և այլն: Տեղահանված և տարագրված քուրդ գյուղացիներին արգելվում էր բնակվել գյուղական վայրերում: Նրանք պարտավոր էին բնակություն հաստատել քաղաքներում և քաղաքատիպ ավաններում՝ իշխանությունների խուզարկու աչքի ներքո:

Ի լրումն 1932 թ. օրենքի՝ 1934 թ. հունիսի 21-ին ԹԱՄԺ-ը ընդունեց № 2510 օրենքը<sup>70</sup> բնակչության վերաբնակեցման վերաբերյալ: Այդ օրենքի առաջին կետը ազդարարում էր, որ կառավարությունը ներքին գործերի նախարարությանը իրավունք է վերապահում «ճշտումներ մտցնել» երկրի ժողովուրդների բնակավայրի հարցում: Օրենքը նախարարությանը լիարժեք իրավունք էր տալիս այս կամ այն էթնիկական խմբի բնակավայրի նպատակահարմարության հարցը լուծելիս առաջնորդվել թուրքական մշակույթի հետ նրանց «կապվածության» սկզբունքով: Կասկածից վեր է, որ այդ օրենքը երկրի ազգային փոքրամասնություններին բացահայտ ու դաժանաբար ձուլելու ու թրջացնելու մի ծրագիր էր:

Նկատի ունենալով, որ քրդական շեյխերը, աղաներն ու բեյերը չափազանց մեծ ազդեցություն ունեին քուրդ զանգվածների վրա, և հաճախ նրանք էին գլխավորում հակակառավարական շարժումները, թուրքական իշխանությունները կաշառքի միջոցով աշխատում էին նրանց գրավել իրենց կողմը: Անհնազանդների նկատմամբ մոտեցումը դաժան էր՝ բանտարկություն, աքսոր կամ ֆիզիկական ոչնչացում: Լայնորեն օգտագործվում էր նաև թուրքական դավադրական զինանոցի ամենափորձված զենքը՝ ցեղերին միմյանց դեմ հրահրելու, ցեղերի միջև զինված կոնֆլիկտներ առաջ բերելու դարերով փորձված միջոցը:

XX դարի 30-ական թվականների կեսերին թուրքական կառավարությունը որոշեց կատարելապես հնազանդեցնել ու իրեն ենթարկել Դերսիմի կիսանկախ զազա ցեղերին: 1936 թ. Աթաթյուրքի առաջարկությամբ Դերսիմի հարցը մտցվեց ԹԱՄԺ-ի օրակարգ: Այդ հարցի վերաբերյալ տեղի ունեցան գաղտնի լուսմներ, որոնցից մեկի ժամանակ «թուրքերի հայրը» հայտարարեց. «Մեզ համար ամենակարևոր ներքին խնդիրը Դերսիմի հարցն է: Ցանկացած գնով պետք է մաքրել երկրի ներսում առկա այդ սարսափելի թարախապալարը, արյուն ծորացող այդ վերքը և արմատախիլ անել այն: Որպեսզի այդ ուղղությամբ ձեռնարկվեն անհետաձգելի միջոցառումներ, անհրաժեշտ է կառավարությանը օժտել ամենալայն լիազորություններով»<sup>71</sup>:

<sup>69</sup> Տե՛ս "The Massacres of Kurds". Publication of the Kurds. National League Hoyboun, Cairo, 1928, էջ 8, տե՛ս նաև **Safrastian A.** Kurds and Kurdistan, London, 1948, էջ 81:

<sup>70</sup> Տե՛ս "Düstür", cilt 15, kis 2, Ankara, 1934, էջ 1156-1159:

<sup>71</sup> "Atatürkün söylev ve demeçleri", kitap 1, T. B. M. Meclisinde ve C. H. P. kurultaylarında (1919-1938), İstanbul, 1945, s. 26.

Քեմալ Աթաթյուրքի ցուցումով ստեղծվեց Դերսիմի գործերի հատուկ կոմիտե: Շուտով այդ երկրամասն անվանվեց Թունջելի: 1936 թ. հունիսի 6-ին ստեղծվեց այսպես կոչված «Չորրորդ գլխավոր տեսչությունը», որի կազմի մեջ մտան Էյազիզ, Թունջելի և Բինգյոլ նահանգները<sup>72</sup>, այսինքն՝ նախկին Դերսիմի ողջ տարածքը: Այդ գոտում ստեղծվեց հատուկ վարչություն՝ գլխավոր տեսուչ, իր դաժանությամբ հայտնի գեներալ Աբդուլլա Ալփոդդանի գլխավորությամբ: Վերջինս օժտվեց նաև զինվորական դիկտատորի իրավունքներով: Գեներալը իր առաջին գործը համարեց Թունջելի, Էյազիզ և Բինգյոլ վիլայեթներում պաշարողական վիճակ հայտարարել և դաժան պատժի սպառնալիքով տեղական բնակչությունից պահանջեց հանձնել 20 հազ. հրացան<sup>73</sup>:

Ողջ 1936 թ. ընթացքում թուրքական բանակի հրամանատարությունը Դերսիմի, Էյազիզի, ճապաղջրի և Բինգյոլի շրջաններում զորք էր կենտրոնացնում: 1937 թ. ամռան սկզբին թուրքերը ռազմական գործողություններ սկսեցին «Դերսիմի խռովարարների» դեմ՝ օգտագործելով նաև ավիացիա, տանկեր և նույնիսկ թունավոր գազ: Թուրքական բանակը գործում էր ենիչերիական ավանդույթներով՝ անխնա ոչնչացնելով ոչ միայն զինված բնակչությանը, այլև խաղաղ գյուղացիներին: Որպեսզի ապստամբներին ստիպեն դուրս գալ իրենց լեռնային թաքստոցներից, թուրքական հրամանատարությունը հրամայեց կրակի ճարակ դարձնել Դերսիմի շրջակայքի անտառները: Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինենյուն և ներքին գործերի նախարար Շյուքրու Կայան ժամանել էին ռազմական գործողությունների շրջան:

1938 թ. Դերսիմի ապստամբությունը ճնշվեց անողոր դաժանությամբ: Ապստամբության ղեկավարները Էյազիզում կախաղան բարձրացվեցին: Սկսվեց արյունոտ հաշվեհարդարը: Դերսիմի շրջանը վերածվել էր իսկական դժոխքի: 1937 թ. մեջլիսն օրենք ընդունեց, ըստ որի Դերսիմի ապստամբների ողջ ունեցվածքը բռնագրավվում էր հօգուտ պետության: 1938 թ. Թուրքիայի ներքին գործերի նախարարի պաշտոնը ստանձնած Ջեյալ Բայարը հայտարարեց, որ «Թուրքիայում քրդական հարց այլևս գոյություն չունի»<sup>74</sup>:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, քրդական հարցը Թուրքիայում չփակվեց: Քրդաբնակ շրջանները նման էին անթեղված կրակի, որ կարող էր ցանկացած պահի բռնկվել: Ընդ որում, այդ հարցը անհանգստացնում էր ոչ միայն Թուրքիային, այլև քուրդ հոծ բնակչություն ունեցող Իրաքին և Իրանին: Ուստի այդ երեք պետությունների կառավարող շրջանները սկսեցին համատեղ միջոցառումներ ձեռնարկել «քրդական սպառնալիքի» դեմ: Այսպես, 1937 թ. հուլիսին նշված երեք պետությունները Թեհրանում Ռեզա շահի Սաադաբադյան պալատում կնքեցին մի ռազմական դաշինք, որը հայտնի է «Սաադաբադյան դաշինք» անունով: Ըստ էության՝ այն հիմք էր դնում այսպես կոչված «Մերձավորարևելյան Անտանտին» կամ «Եռյակ համաձայնությանը»: Այդ դաշինքում Թուրքիան ղեկավար դեր ուներ<sup>75</sup>: Սաադաբադյան դաշինքը նախատեսում էր այն ստորագրած պետություն-

<sup>72</sup> Տե՛ս "Güney Doğu, Birinci Genel Müfettişlik Bölgesi", İstanbul, 1939, էջ 66:

<sup>73</sup> Տե՛ս Dersimi M. N. Kürdistan Tarihinde Dersim, էջ 270:

<sup>74</sup> Kimhe John, Seven Fallen Pillars. The Middle East 1945-1952, London, 1953, p. 140.

<sup>75</sup> Տե՛ս Миллер А. Ф. Очерки новейшей истории Турции. М.-Л., 1948, էջ 184:



ների համատեղ պայքար անջատողական ուժերի, հետևաբար նաև՝ քրդական շարժման դեմ<sup>76</sup>:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին քրդերի ազգային շարժումը Թուրքիայում լայն թափ չստացավ գլխավորապես այդ երկրում առկա ռազմաոստիկանական և վարչական ահաբեկչության հետևանքով: Բացի այդ, նշված շրջանում թուրքական կառավարությունը երկրի արևելյան վիլայեթներում պահում էր զինված խոշոր ուժեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող էին օգտագործվել քրդերի դժգոհության ցանկացած դրսևորման դեմ<sup>77</sup>:

Պատերազմը քրդերի մեջ նոր հույս էր արթնացրել: Նրանք հավատում էին, որ պատերազմի ավարտից հետո իրենց ազգային իղձերը իրականություն կդառնան: Այդ տարիներին քրդական առաջնորդները մեծ տերությունների ղեկավարների և նորաստեղծ ՄԱԿ-ի անունով ուղարկում էին հուշագրեր և ուղերձներ, որոնցում խնդրում էին նրանց աջակցությունը քրդական հարցի լուծման գործում<sup>78</sup>: Մասնավորապես նրանք պահանջում էին մշակութային և վարչական ինքնավարություն Թուրքիայի, Իրանի և Իրաքի կազմում: Սակայն այդ բոլոր դիմումներն ու խնդրանքները մնացին անպատասխան:

Պատերազմի ավարտից հետո շարունակելով ազգային փոքրամասնությունների ճնշման ու ծուլման քաղաքականությունը՝ թուրքական կառավարող շրջանները ձգտում էին հարցն այնպես ներկայացնել, որ Թուրքիայում առհասարակ գոյություն չունեն քրդեր, հետևաբար նաև՝ քրդական հարց: Այդ մասին բազմաթիվ վկայություններ կան նաև Թուրքիայում աշխատող արևմտյան երկրների լրագրողների հրապարակումներում: Այսպես, «Նյու-Յորք փոստ» թերթի թղթակից Մաուրերը 1946 թ. ապրիլին գրում էր. «Թուրքիայում քրդերին կոտորել և աքսորել են այնպիսի մասշտաբներով, որ թուրքական կառավարությունը այժմ կարող է պնդել, որ Թուրքիայում քրդական հարց գոյություն չունի»<sup>79</sup>:

Իսկ անգլիական «Էկոնոմիստ» ամսագրի թղթակիցը 1946 թ. մայիսին գրում էր. «Քրդերը թուրքական պետության աքիլեյան գարշապարն են: Նրանց ճակատագրի մասին Թուրքիայում որոշակի ոչինչ հայտնի չէ: Թուրքական Քրդստանը գոյություն ունի երկաթյա վարագույրի ետևում: Միակ բանը, որ հայտնի է, այն է, որ 1930 թ. թուրքական բանակը խոշոր ռազմական գործողություններ է իրականացրել քրդերի դեմ, և դա կրկնվել է 1937-1938 թթ.: Այնուհետև, վերջին գործողությունից հետո թուրքական ներքին գործոց նախարարը հայտարարել է, որ Թուրքիայում քրդական հարց այլևս գոյություն չունի: Այդ ժամանակվանից սկսած՝ թուրքական քրդերը պաշտոնապես դադարել են գոյություն ունենալուց: Նրանց մասին երբեմն հիշատակում են պատահականորեն՝ մերթ ուրախ լեռնային բանդիտներ, մերթ ուրախ լեռնային թուրքեր»<sup>80</sup>:

«Սովորաբար Թուրքիայի վերաբերյալ գրքերում որպես ժողովուրդների հիշատակվում էին քրդեր, լազեր, թուրքմեններ, ուրուքներ, դըզըլբաշ-

<sup>76</sup> Տե՛ս "Düstür", Cilt 19 (1938), Ankara, 1938, էջ 300-302:

<sup>77</sup> Տե՛ս Лазарев М. С., Мгой Ш. Х. и др., նշվ. աշխ., էջ 186:

<sup>78</sup> Տե՛ս "Bulletin mensuel de Centre d'etudes Kurdes", Paris, № 6, էջ 1:

<sup>79</sup> "The New York Post", 17. 04. 1946. Նաև՝ Kim he John, նշվ. աշխ., էջ 140:

<sup>80</sup> "The Economist". Intelligence Unity Limited, 10. 05. 1946.

ներ, չերթեզներ: Նոր թուրքերը եռանդուն կերպով վերացրին այդ անվանումները. նրանք բոլորը այժմ թուրքեր են»,- գրում էր ամերիկացի հետազոտող Է. Բիսբիմ<sup>81</sup>: Իսկապես, թուրքական«Սոն փոստա» թերթը գրում էր, որ «Թուրքիայում երբեք չի եղել քուրդ փոքրամասնություն՝ ո՛չ քոչվոր, ո՛չ նստակյաց, ո՛չ գիտակից և ո՛չ անգիտակից»<sup>82</sup>:

Ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ հետպատերազմյան առաջին տարիներին թուրքական կառավարող շրջանները ձեռնարկում էին միջոցներ՝ քրդական շարժման նոր պոռթկումներ թույլ չտալու համար: Այդ շրջանում ներքին քաղաքական լարվածության ուժեղացման հետևանքով թուրքական կառավարող շրջանները նոր ճշտումներ մտցրին իրենց քրդական քաղաքականության մեջ: Նրանք մասնավորապես հրաժարվեցին քրդերի նկատմամբ իրենց զանգվածային հետապնդումների քաղաքականությունից: Այդ հարցում որոշակի դեր խաղաց նաև այն իրողությունը, որ 1945 թ. Թուրքիան անցավ բազմակուսակցական համակարգի, որի հետևանքով ժողովրդական զանգվածների դերը երկրի քաղաքական կյանքում նշանակալիորեն մեծացավ: Այլևս հնարավոր չէր հաշվի չնստել այն իրողության հետ, թե ընտրողները որ կուսակցությանը կտան իրենց ձայները:

Անգլիացի Ջ. Էդմոնդը 1950-ական թվականների կեսերին գրում էր. «Բացառիկ լավ տեղեկացված աղբյուրից ինձ հայտնի դարձավ, որ Թուրքիայի ժողովրդավարացման հետևանքով քրդերի ձայները միանգամայն անսպասելիորեն ձեռք բերեցին կարևոր նշանակություն, ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ գնահատելով այս երկրում քուրդ բնակչության թիվը՝ 3-4 միլիոնը միանգամայն իրական են համարում»<sup>83</sup>:

Անցումը բազմակուսակցական համակարգին ունեցավ նաև այն հետևանքը, որ քրդերի ունևոր խավերը, այդ թվում նաև ավատական վերնախավի ներկայացուցիչները՝ շեյխերն ու աղաները, սկսեցին մերձենալ թուրքական տիրապետող շրջաններին: «Ժողովրդավարություն խաղալու» հետևանքով քուրդ ավատատերերը, անկախ կենտրոնական թուրքական իշխանության հանդեպ իրենց վերաբերմունքից, աստիճանաբար սկսեցին համագործակցել թուրքական կառավարող շրջանների, բուրժուազիայի և կալվածատերերի հետ: Նրանք սկսեցին տեղափոխվել քաղաքներ, որտեղ զբաղվում էին առևտրով, ֆինանսական գործարքներով և նույնիսկ կարողացան իրենց հսկողության տակ վերցնել տնտեսության տարբեր ճյուղեր՝ միաժամանակ շարունակելով իրենց ձեռքում պահել խոշոր հողային տիրույթներ ու կալվածքներ: Սակայն դա դեռ բոլորը չէր: Քրդական վերնախավի ներկայացուցիչները սկսեցին միաժամանակ զբաղվել քաղաքականությամբ և հիմնական քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ մասնակցում էին վիլայեթների տեղական իշխանությունների մարմինների աշխատանքներին:

Այդ բոլորը տվեցին իրենց շոշափելի արդյունքները: 1947 թ. Թուրքիայի վարչապետը հայտարարեց, որ այսուհետև քրդերը պետք է թուրքերին հավասար իրավունքներով զորակոչվեն բանակ<sup>84</sup>: Մինչ այդ, որպես

<sup>81</sup> **Bisbee Eleanor**, The Turks. Pioneers of the Republic, 1920-1950. University of Pennsylvania Press, Philadelphia, 1951, p. 75.

<sup>82</sup> "Son Posta", 11. 04. 1946.

<sup>83</sup> **Edmonds C. J.** Kurds, Turks and Arabs. Politics, Travel and Research in North-Eastern Iraq, Oxford, 1919-1925, p. 4.

<sup>84</sup> Տե՛ս **Kinnane Derk**, The Kurds and Kurdistan, London-New York, 1964, էջ 31:

կանոն, բանակում քրդերին օգտագործում էին օժանդակ զորամասերում: Բացի այդ, ընդունվեցին համապատասխան օրենքներ, որոնց համաձայն՝ այն անձինք, որոնք հարկադրաբար վերաբնակեցվել էին այլ վայրերում, կարող էին վերադառնալ նախկին բնակության վայրերը: Սակայն օրենքում նշվում էր, որ առանց կառավարության համաձայնության ոչ մեկին չի թույլատրվում բնակություն հաստատել Ադրիի (գտնվում է Արարատ լեռան շրջանում - Վ. Բ.), Սասունի, Թունջելիի և Ջեյլանի շրջաններում:

1950 թ. Թուրքիայում տեղի ունեցած ընտրությունների ժամանակ կառավարող ժողովրդահանրապետական կուսակցությունը պարտություն կրեց: Հաղթանակ տարավ Ջեյլա Բայարի և Ադնան Մենդերեսի Դեմոկրատական կուսակցությունը: Վերջինս ընտրարշավի ժամանակ խոստանում էր քրդերին թուրքերի հետ հավասար իրավունքներ տալ: Այդ ժամանակ դեմոկրատները հանրապետականներին մեղադրեցին քրդերի հանդեպ բռնություններ իրագործելու և արևելյան վիլայեթներում ոչ հոգատար վերաբերմունքի մեջ<sup>85</sup>: Սակայն այդ մեղադրանքները քրդերի համար համոզիչ չէին մանավանդ այն պատճառով, որ իրենց նկատմամբ իրականացված բռնություններին մեղսակից էր նաև նախկին վարչապետ Ջեյլա Բայարը, որն այժմ քրդերին «պաշտպանող» Դեմոկրատական կուսակցության նախագահն էր: Քրդերի ջախջախիչ մեծամասնությունը, այնուամենայնիվ, իր ձայնը տվեց Դեմոկրատական կուսակցությանը, որը նաև խոստանում էր միջոցներ ձեռնարկել երկրի արևելյան մասի քուրդ բնակչությանը խիտ շրջաններում տնտեսությունը զարգացնելու: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ խոստումները պարզապես նախընտրական ստեր էին:

Քուրդ քաղաքական գործիչ և գիտնական Ի. Վանլին այդ առթիվ գրում էր. «Քրդերի համար ինչպես հանրապետականների, այնպես էլ դեմոկրատների իշխանությունը նշանակում է թուրքական ռասիստական բուրժուազիայի տիրապետություն, դա ազգային ճնշում է, թուրքական վարչության կոռուպցիա, ոստիկանության ու բանակի տեռոր: Դա աղքատություն է, քրդերի տարրական իրավունքների բացակայություն..., դա ֆաշիզմ է, ռասայական ատելություն և ամեն կարգի ժողովրդավարության բացակայություն»<sup>86</sup>:

Դեմոկրատական կուսակցության կառավարությունը չկատարեց նաև իր շռայլ խոստումները երկրի արևելյան, գերազանցապես քրդաբնակ շրջանների տնտեսական զարգացման վերաբերյալ<sup>87</sup>: Ավելին, նա գործունե միջոցներ ձեռնարկեց, որոնք ուղղված էին Թուրքիայի արևելյան հարևան երկրների՝ Իրանի և Իրաքի հետ համագործակցությունը ուժեղացնելուն՝ քրդերի հավանական ելույթները սրատելու ու ջախջախելու համար:

1960 թ. գարնանը քաղաքական իրադրությունը Թուրքիայում ծայրահեղորեն սրվել էր: Դրա հետևանքը եղավ այն, որ մայիսի 27-ին երկրում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որի պատճառով իշխանության գլուխ եկան բարձրագույն զինվորական շրջանների ներկայացուցիչները, որոնք համախմբվեցին Ազգային միասնության կոմիտեի շուրջը: Դատելով

<sup>85</sup>Տե՛ս "Ulus", 23. 08. 1952:

<sup>86</sup> Vanly I. Ch. Le Kurdistan et la Question kurde, Paris, 1960, p. 16.

<sup>87</sup> Տե՛ս Յ. Գալուստյան, Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը արևելյան վիլայեթներում (1920-1960-ական թվականներ), Եր., 1999, էջ 39:

նշված կոմիտեի ներկայացուցիչների հայտարարություններից՝ պետական հեղաշրջման պատճառներից մեկը քրդական հարցն էր, որը, ըստ նրանց, սպառնում էր պետության ամբողջականությանը<sup>88</sup>: 1960 թ. մայիսի 31-ին թուրքական մամուլը հրապարակեց մի սենսացիոն հաղորդագրություն, համաձայն որի, իբր, Ազգային միասնության կոմիտեի ձեռքն էին ընկել այնպիսի փաստաթղթեր, որոնք վկայում էին տապալված Դեմոկրատական կուսակցության մի շարք անդամների թողտվության մասին՝ ստեղծելու Քրդստան պետություն: Ընդ որում, նշվում էր, որ տապալված Դեմոկրատական կուսակցության կառավարությունը չի խոչընդոտել քրդերի այդ ձգտումը, մինչդեռ նոր կառավարությունը վերջ է տվել «հակապետական գործողություններին» և ջանացել է լրիվ մեկուսացնել քրդերին, «որոնք ձգտում են մասնատել ու տրոհել երկիրը»: «Այն, որ միասնական թուրքիան պատկանում է թուրքերին, պետք է ներշնչի որոշ անձանց, որոնք հետապնդում են այլ նպատակներ»,<sup>89</sup> - այդ բառերով էր ավարտվում հաղորդագրությունը:

Հարկ է նշել, որ թուրքիայում կառավարական այդ հեղաշրջումից հետո ազգային անկախության համար քուրդ ժողովրդի պայքարը աշխուժացավ: Երկրի արևելքում բնակվող քուրդ զանգվածները դեռևս տեղյակ չէին հեղաշրջումն իրականացրած զինվորականների տեսակետներին՝ կապված քրդական հարցի հետ: Քրդերը թյուրիմացաբար կարծում էին, թե թուրքիայում տեղի է ունեցել ժողովրդավարական հեղաշրջում, ուստի դրա հետ կապում էին ազգային իղձերի իրականացման որոշակի հույսեր: Սակայն թուրքիայի նոր իշխանությունները շատ շուտով հասկացրին, որ իրենք քրդական հարցի գծով գնալու են տրորված ճանապարհներով: Արդեն հեղաշրջման հաջորդ օրը նոր իշխանությունները սկսեցին քրդերի ձերբակալություններ: Նրանք ձերբակալեցին 244 քուրդ գործիչների՝ նրանց մեղադրելով «պետական անվտանգության դեմ դավադրություն կազմակերպելու» մեջ: Ձերբակալվածներին բանտարկեցին Սըվասի համակենտրոնացման ճամբարում<sup>90</sup>:

1960 թ. հոկտեմբերի 17-ին Ազգային միասնության կոմիտեն ընդունեց № 105 օրենքը, համաձայն որի՝ «անբարեհույս» քրդական ընտանիքները հարկադրաբար տեղահանվեցին իրենց ծննդավայրերից և տեղափոխվեցին թուրքիայի այլ շրջաններ<sup>91</sup>, մասնավորապես՝ արևմտյան վիլայեթներ (Անթալիա, Իզմիր, Բուրդուր, Մուղլա, Աֆյոն, Իսպարտա, Մանիսա, Չորում, Դենիզլի): Տեղահանվածների մեծ մասը աչքի ընկնող քուրդ գործիչներ էին, որոնք թուրքական Քրդստանի և Արևմտյան Հայաստանի քուրդ բնակչության շրջանում ունեին մեծ ազդեցություն: Նշված օրենքի ընդունումը հիմնավորվում էր նրանով, որ, իբր, թուրքիայի արևելյան սահանգներում ծայր է առել քրդական շարժում, որի նպատակն է անկախ Քրդստանի ստեղծումը:

1960 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային միասնության կոմիտեն ընդունեց № 144 օրենքը, որի համաձայն երկրի համալսարաններից հեռացվե-

<sup>88</sup> Stü Kuvılcımlı H. 27 Mayıs ve yön hareketinin sınıfsal eleştirisi, İstanbul, 1970, էջ 169-170.

<sup>89</sup> "Cumhuriyet", İstanbul, 31. 05. 1960.

<sup>90</sup> Stü Şivan, Kürt Millet Hareketleri ve Irakta Kürdistan ihtilâli, Bzomma-Stockholm, 1970, էջ 109:

<sup>91</sup> Stü "Yeni Kanunlarımız". Cilt I, Ankara, 1960, s. 101-103:

ցին 147 պրոֆեսորներ ու դասախոսներ, որոնց մի մասը մեղադրվում էր նրանում, որ իբր գործունեություն էր ծավալել անկախ Քրդստան ստեղծելու ուղղությամբ<sup>92</sup>:

1960 թ. հոկտեմբերի 4-ին, ելույթ ունենալով Դիարբեքիր քաղաքում, Թուրքիայի նախագահ Ջենալ Գյուլսելը հայտարարեց, որ որոշ վնասակար տարրեր ցանկանում են քրդերին հակադրել թուրքերին: «Նրանց նպատակը պարզ է, նրանք ուզում են պառակտել և կուլ տալ մեզ: Դա նրանց չի հաջողվի, քանի որ Թուրքիայում բոլոր քաղաքացիները ծագումով թուրքեր են»<sup>93</sup>: Նախագահին ձայնակցելով՝ Ազգային միասնության կոմիտեի անդամ Օզդադը նշեց, որ թուրքերն ու քրդերը պատկանում են նույն ռասային, և նրանց երակներում հոսում է նույն արյունը: «Տարբերությունը միայն այն է, որ քրդերը խոսում են այլ լեզվով: Այն մարդիկ, որոնք շաղ են տալիս պառակտման սերմեր և սատարում են քրդերին, ձգտում են նրանց բաժանել մեզանից: Ազգային միասնության կոմիտեն թույլ չի տա բնակչությունը մասնատել քրդերի և թուրքերի: Այդ առթիվ մենք ընդունել ենք օրենք և կպատժենք բոլոր նրանց, ովքեր արևելյան վիլայեթների բնակիչներին կանվանեն քրդեր»<sup>94</sup>:

Ազգայնական և շովինիստական բնույթի մամնատիպ հայտարարությունները և 1961 թ. ընդունված նոր սահմանադրությունը, որի մեջ ռասիզմը անթաքույց էր, քրդերին համոզեցին, որ նոր իշխանություններից անկարելի է դրական տեղաշարժեր սպասել քրդական հարցում: Ուստի նրանք վերստին պայքար ծավալեցին հանուն իրենց ազգային իրավունքների: Պայքարի ձևերից մեկը պարտիզանական ելույթներն էին, որոնք թուրքական պաշտոնական քարոզչությունը նախկինի պես անվանում էր «բանդիտական»: Երկրի արևելյան մասերում ծայր առավ իսկական պարտիզանական պատերազմ: Կառավարությունը դրան պատասխանեց բանտարկություններով ու մահապատիժներով<sup>95</sup>:

1960-ական թվականների կեսերին, չնայած այն հանգամանքին, որ թուրքական օրենսդրությունը Թուրքիայի ազգային փոքրամասնություններին արգելում էր ստեղծել քաղաքական կուսակցություններ, ծնունդ առավ «Թուրքական Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը»(ԹՔԴԿ): Վերջինս իր քաղաքական նպատակն էր հռչակում պայքարը հանուն քուրդ ժողովրդի վարչական ու մշակութային ինքնավարության Թուրքիայի Հանրապետության շրջանակներում<sup>96</sup>: 1960-ական թվականների երկրորդ կեսին Թուրքիայում գործում էին նաև Թուրքիայի քրդերի ազատագրման կոմիտեն, Ազատության ասոցիացիան, Քրդստանի մարտիկների կազմակերպությունը<sup>97</sup>: Քրդական այդ բոլոր կազմակերպությունները գործում էին խորը ընդհատակում: 1960-ական թվականների վերջերին սկսեցին ծնունդ առնել նաև երիտասարդական և այլ հասարակական լեզալ կազմակերպություններ ու ընկերություններ: 1969 թ. ստեղծվեցին նաև «Արևելքի հե-

<sup>92</sup> Տե՛ս "Kurdistan", 1961, № 7-8, էջ 40:

<sup>93</sup> **Аванесов С. С.** Положение национальных меньшинств в Турции. Ер., 1963, с. 73.

<sup>94</sup> Նույն տեղում, էջ 73-74:

<sup>95</sup> Տե՛ս "Cumhuriyet", İstanbul, 18. 12. 1963:

<sup>96</sup> Տե՛ս **Барзани Х.** Курдские политические партии и общественные организации в борьбе за разрешение курдской проблемы. М., 1971, էջ 194:

<sup>97</sup> Տե՛ս "Milliyet", İstanbul, 1971, № 40:

ղափոխական մշակութային օջախներ», որոնք ընդգրկեցին Թուրքիայի բոլոր քրդաբնակ քաղաքներն ու բնակավայրերը:

1970-ական թվականների սկզբին թուրքական կառավարությունը որոշեց քրդական շարժման նկատմամբ կտրուկ միջոցառումների դիմել: «Կոմանդոս» ջոկատները և ժանդարմական ուժերը բազմաթիվ քաղաքներում քրդական տեղական կառույցների վրա կազմակերպեցին հարձակումներ, որոնք ուղեկցվում էին քրդերի զանգվածային ձերբակալություններով<sup>98</sup>: Ամենուրեք գործում էին այսպես կոչված արտակարգ դատարանները, որոնք դատապարտյալ քրդերին մեղադրում էին «քրդական պետություն ստեղծելու մտադրություն ունենալու» մեջ<sup>99</sup>: 1971 թ. ապրիլի 26-ին Նիհաթ էրիմի կառավարությունը Թուրքիայի հարավարևելյան վիլայեթներում, որտեղ քրդական շարժումը գնալով վերելք էր ապրում, հայտարարեց արտակարգ դրություն: Դա թուրքական իշխանություններին հնարավորություն տվեց «օրինականացնելու» իրենց պատժիչ գործողությունները քրդերի դեմ: 1972 թ. մայիսին արտակարգ դատարանը Թուրքական Քրդստանի դեմոկրատական կուսակցության 40 անդամի դատապարտեց երկարատև բանտարկության<sup>100</sup>: Նրանք բոլորը մեղադրվում էին «քուրդիզմ» քարոզելու մեջ: Զինվորական իշխանությունները միաժամանակ ռազմական գործողություններ էին իրականացնում քրդական դիմադրության օջախները վերացնելու ուղղությամբ:

1974 թ. ստեղծվեց «Թուրքական Քրդստանի սոցիալիստական կուսակցությունը», ինչպես նաև «Օզգյուրլուք յուլու» («Ազատության ուղի») կազմակերպությունը: Սակայն այդ շրջանում առավել ազդեցիկ էր Թուրքական Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը, որը միավորում ու համախմբում էր ընդհատակում գործող քրդական խմբերը: Վերջինս իր քաղաքական պայքարի նպատակն էր հռչակել ազգային-դեմոկրատական հեղափոխության միջոցով հասնել այն բանին, որ քուրդ ժողովուրդը «ինքը կարողանա որոշել իր ճակատագիրը»: 1974 թ. կուսակցությունը որոշում ընդունեց ստեղծել դիմադրության զինված ուժեր կամ «ժողովրդական բանակ»: Նրա առաքելությունն էր՝ քրդական շրջանները մաքրել թուրքական զինված ուժերից և թուրքական Քրդստանում ստեղծել ժողովրդադեմոկրատական իշխանություն: Թուրքական Քրդստանի դեմոկրատական կուսակցության ծրագրում նշվում էր, որ թուրքական Քրդստանի սահմանները պետք է որոշվեն էթնիկական, աշխարհագրական, տնտեսական և պատմական գործոններին համապատասխան: Թուրքական Քրդստանի պաշտոնական լեզուն պետք է լինի քրդերենը: Սակայն պետք է նշել, որ գտնվելով խորը ընդհատակում՝ հիշյալ կուսակցությունը բավականաչափ ազդեցություն չունեին քրդական զանգվածների վրա: Նրա տրամադրության տակ գոյություն չունեին նաև բավարար չափով նյութական և ռազմական ուժեր՝ ինքնուրույն իրականացնելու իր քաղաքական նպատակները:

1978 թ. թուրքական կառավարությունը երկրի 20 վիլայեթներում հայտարարեց արտակարգ դրություն: Այն հիմնականում ընդգրկում էր քրդա-

<sup>98</sup> Տե՛ս Vanly I. Ch. Survey of the National Question of Turkish Kurdistan with Historical Background, Rome, 1971, էջ 47-48:

<sup>99</sup> Տե՛ս "Dünya", İstanbul, 11. 05. 1971:

<sup>100</sup> Տե՛ս "The Manchester Guardian", 23. 05. 1972:

բնակ շրջանները: «Անջատողականների դեմ պայքարի» կարգախոսի ներքո իշխանությունները սկսեցին քրդերի դեմ իրագործել «զսպման» քաղաքականություն: Երկրի արևելյան վիլայեթներում տիրում էր բռնությունների և անհանդուրժողականության մթնոլորտ: Իրավիճակը երկրում դառնում էր անկառավարելի: 1978-1980 թթ. Քահրամանմարաշի, Էրզինջանի և Չորումի վիլայեթներում տեղի էին ունենում սոււննիների և շիաների արյունոտ բախումներ: Իշխանության շրջանակներում հատկապես տագնապ ու անհանգստություն էին առաջացնում քրդական շարժման արմատականացումն ու վերելքը: 1978 թ. Արդուլա Օջալանը ստեղծեց Քրդստանի բանվորական կուսակցությունը (ՔԲԿ), որը ծախ կազմակերպություն էր և մաոիստական-կաստրոյական ուղղությամբ մարքսիստական-լենինյան կուսակցություն էր: Այն նախապատվությունը տալիս էր պայքարի բռնի մեթոդներին: Արդեն 1970-ական թվականների վերջերին և 1980-ական թվականների սկզբներին ՔԲԿ-ն կազմակերպում էր առանձին պարտիզանական ելույթներ, իսկ 1984 թ. կուսակցությունը Արևելյան Անատոլիայում պարտիզանական բացահայտ պայքար սկսեց թուրքական իշխանությունների և պատժիչ մարմինների դեմ: Այդ ժամանակվանից սկսած Թուրքիայի քրդաբնակ շրջանները վերածվեցին Մերձավոր Արևելքում մշտական լարվածության նոր օջախի: Քրդական հարցը գնալով ենթարկվում էր միջազգայնացման: Երևան եկան քուրդ մահապարտներ: Կուսակցության ազդեցությունը տարածվում էր հարևան երկրներում: Ինքը՝ Օջալանը, իր շտաբով տեղափոխվեց Սիրիա՝ իր գործողություններում ավելի ազատ լինելու նպատակով:

Նման պայմաններում 1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում<sup>101</sup>: Դրանից հետո իշխանությունների շուրջիստական քաղաքականությունը աննախընթաց վերելք ապրեց: Յեղաշրջումն իրականացրած զինվորականները հայտարարեցին, որ չեն ճանաչում քրդերի ազգային իրավունքները<sup>102</sup>: Պետության ղեկավար Քեմալ Էվրենը 1981 թ. հոկտեմբերի 19-ին «Շպիգել» ամսագրին տված հարցազրույցի ժամանակ ասել է հետևյալը. «Քրդերը մեկ անգամ չէ, որ ապստամբել են. և՛ Օսմանյան կայսրության, և՛ Աթաթյուրքի ժամանակ: Մեր առջև դիվական մի ծրագիր է: Երբ թուրքական հանրապետությունը թուլանում է, քրդերն անմիջապես ապստամբում են: Ցանկանում են արտաքին ուժերի օգնությամբ Թուրքիան մասնատել ու տրոհել: Քրդերը կան: Սակայն մենք թույլ չենք տա նրանց տրոհել մեր երկիրը: Նրանք մեզանից ոչինչ չեն կարող ստանալ: Մենք կանենք ամեն ինչ, որ արմատախիլ անենք այդ հարցը»<sup>103</sup>:

Յեղաշրջումից հետո ընդունված նոր սահմանադրությունը նախորդների նման հաշվի չէր առնում քրդերի ձգտումները, չէր ճանաչում նրանց ազգային իրավունքները: Ըստ այդ սահմանադրության՝ Թուրքիայում ապրում են միայն թուրքեր:

1983 թ. մայիսին մեջլիսն ընդունեց օրենք ազգային բնակեցման մասին (Միլլի իսկյան յասասի), ըստ որի «ազգային անվտանգության»

<sup>101</sup> Ст'ю Дружиловский С. В. Политика турецкого правительства в курдском вопросе после военного переворота 1980 г. // "Курдская проблема: международный аспект". ДА МИД России. М., 2001:

<sup>102</sup> Ст'ю Günter Michael, The Kurds and the future of Turkey, Basingstoke, Macmillan, 1997.

<sup>103</sup> "Der Spiegel", 19. 10. 1981.

պատրվակի տակ թուրքական իշխանությունները կարող էին բնակչությանը երկրի մի մասից տեղափոխել մի այլ մաս<sup>104</sup>: Այլ կերպ ասած՝ նրանք կարող էին «խռովարար» քրդերին իրենց ծննդավայրերից արտաքսել Թուրքիայի արևմտյան նահանգներ, ինչպես որ դա բազմիցս արվել էր 1920-30-ական թվականներին և հետպատերազմյան շրջանում: Այդ օրենքի հիման վրա բազմաթիվ քրդական ընտանիքներ տեղահանվեցին և վերաբնակեցվեցին արևմտյան շրջաններում:

Թուրքիայի զինվորական վարչակարգը որոշեց Սիրիայի, Իրաքի և Իրանի հետ սահմանի ողջ երկայնքով ստեղծել 10-12 կմ-անոց, այսպես կոչված անվտանգության գոտի:

Թուրքիայում քրդերին արգելվում էր սովորել մայրենի լեզվով, գրել ու խոսել քրդերեն, լսել քրդական երաժշտություն, կրել ազգային տարագ և անել այն ամենը, ինչը կարող էր վկայել քուրդ ազգի գոյության մասին:

Ջինվորական իշխանություններն արգելեցին քրդական կազմակերպությունների գործունեությունը, փակեցին քուրդ մտավորականության կողմից հրատարակվող թերթերն ու ամսագրերը («Ռոժա վեյաթ», «Օզգյուռլուք յուլու», «Ռըզգարի», «ժինա նու», «Դևրիմջի դեմոքրաթ գենջիք» և այլն), դատական հետապնդումների էին ենթարկում քաղաքական կուսակցությունների ղեկավարներին ու անդամներին, քրդական գրականություն հրատարակողներին և այլն: Նրանց բոլորին ներկայացվում էր միևնույն մեղադրանքը՝ «միասնական թուրք ազգի» դեմ ուղղված գործողություններ և Թուրքիան մասնատելու փորձեր:

Դաժան հետապնդումների և ահաբեկչության պայմաններում բազմաթիվ քուրդ գործիչներ ստիպված էին լքել երկիրն ու ապաստանել հարևան երկրներում (Սիրիա, Լիբանան) և Արևմտյան Եվրոպայում:

1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորական իշխանությունները արտակարգ դրությունը տարածեցին ողջ երկրի վրա: Նրանք երկրորդ բանակը Կոնիայից տեղափոխեցին Մալաթիա՝ դրանով իսկ թուրքական զինված ուժերի գերակշիռ մասը տեղակայելով Թուրքիայի արևելյան վիլայեթներում: Այդ բանակը համալրվեց նաև ռազմական նորագույն տեխնիկայով ու սպառազինությամբ: Ըստ էության քրդական բնակչություն ունեցող շրջանները հայտնվեցին կատարյալ ռազմակալման վիճակում: «Կոմանդոս» զորամիավորումները պատժիչ դաժան գործողություններ էին իրականացնում քուրդ խաղաղ բնակչության նկատմամբ: Ձեռք որոնելու պատրվակով նրանք ժանդարմերիայի և ոստիկանության հետ համատեղ հարձակումներ էին կազմակերպում քրդական գյուղերի վրա, քշում-տանում էին անասունները և իրենց ձեռքն ընկած գույքը: Քրդական բնակչություն ունեցող տարածքներում անց էին կացվում զորավարժություններ: Ընդ որում, հաճախ «հակառակորդը» հազմված էր լինում քուրդ պարտիզանների զգեստներ:

1983 թ. խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ զինվորական իշխանությունները երկրում թույլ տվեցին կուսակցությունների գործունեությունը:

1983 թ. վարչապետ Թուրդութ Օզալը, հանդես գալով կառավարական ծրագրի շարադրմամբ, շեշտեց, որ իր կառավարությունը ազգայնական է, որ ազգայնականության իր կոնցեպցիան ուղղված է թուրք ազգի

<sup>104</sup> Տե՛ս "Denge Komkar", Köln, 1983, № 54, էջ 6:



անկախության ու նրա ամբողջականության պահպանմանը: Միաժամանակ նա խոստանում էր «նշտական և արդյունավետ պայքար մղել անիշխանության, ահաբեկչության, անջատողականության և ծայրահեղ հոսանքների դեմ»: Այստեղ, անշուշտ, նկատի ունենալով նաև քրդական շարժումների դեմ «անողորմ պայքարի» հույժ անհրաժեշտությունը:

Սակայն պետք է նշել, որ թուրքական կառավարությունը միայն ռազմաոստիկանական միջոցառումներով չէր փորձում «լուծում տալ» քրդական հարցին: Նա խոստանում էր նաև միջոցներ ձեռնարկել նպաստելու քրդաբնակ շրջանների զարգացմանը, որը, թուրքոլոթ Օզալի կառավարության կարծիքով, կարող էր թուլացնել լարվածությունը երկրի արևելյան շրջաններում: «Մենք կարծում ենք,- ասում էր Օզալը,- որ սոցիալական ու տնտեսական օգուտի տեսակետից առաջնահերթ կարևորություն ունի Հարավարևելյան Անատոլիայի զարգացման նախագիծը: Մենք այն համարում ենք մեր ազգային խնդիրը և կձեռնարկենք բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ամենասեղմ ժամկետներում այդ նախագիծը կյանքի կոչելու համար»:

Համաձայն այդ ծրագրի՝ 1984 թ. հուլիսին թուրքոլոթ Օզալի կառավարությունը «Ռեսմի գազեթ» թերթում հրապարակեց օրենքի ուժ ունեցող մի որոշում. երկրի 27 վիլայեթներ հայտարարվեցին «ազատ գոտի»: Այդ գոտու մեջ էին մտնում նաև արևելյան ու հարավարևելյան վիլայեթները: Համաձայն այդ որոշման՝ բազմազգ մոնոպոլիաները և տեղական հողինգները Ադրը, Կարս, Թունջելի, Բինգյոլ, Մուշ, Բիթլիս, Սղերթ, Հաքյարի, Գյումուշանե և Վան վիլայեթներում ներդրում կատարելիս ազատվում էին եկամտահարկից, իսկ Սըվաս, Մալաթիա, Էյազիգ, Դիարբեքիր, Ադրյաման, Քահրամանմարաշ, Ուրֆա, Չանկըրը, Չորում, Կաստամոնու, Սինոպ, Յոզղաթ, Արթվին, Էրզրում, Էրզինջան և Մարդին վիլայեթներում կապիտալ ներդրումներ իրականացրած մոնոպոլիաները պետք է վճարեին միայն սահմանված եկամտահարկի 40%-ը<sup>105</sup>: Խոստանում էին, որ մոնոպոլիաները կստանան նաև այլ արտոնություններ:

Այս և նմանատիպ այլ միջոցառումների քաղաքական ենթատեքստը, անտարակույս, առաջին հերթին երկրում քրդական ազգային շարժումը զսպելն էր:

Հարկ է նշել, որ 1980-ական թվականներին թուրքիայում ծնունդ առան մի շարք քաղաքական կուսակցություններ ու խմբավորումներ: Շարունակում էր գործել Աբդուլլա Օջալանի կողմից գլխավորվող Քրդական բանվորական կուսակցությունը (ՔԲԿ), որը հայտնի է նաև Քրդական աշխատավորական կուսակցություն (ՔԱԿ) անվամբ: Այն պայքարում էր հօգուտ քրդական անկախ պետության ստեղծման: Սկզբնապես, ինչպես նշվել է վերևում, այդ կուսակցությունն ուներ կոմունիստական կողմնորոշում, հետագայում մտավորականությանը իր շարքերը ներգրավելու նպատակով ՔԲԿ-ն հրաժարվեց մարքսիստական կարգախոսներից: Այդ կուսակցության ռազմական կազմակերպությունը կոչվում էր Քրդստանի ժողովուրդների ազատագրման բանակ (ՔԺԱԲ):

Քրդական մյուս խմբավորումը իրանական «Հըզբալլահի» («Աստծո կուսակցություն») գաղափարական ակունքներից սերող քրդական «Հըզբալլահն» էր, որը ստեղծել էր Հուսեյին Վելիօղլուն (իրական ազգանունը՝

<sup>105</sup> Տե՛ս "The Times", 10. 08. 1984, էջ 11:

Դուրմագ, ծնվել է Բաթմանի նահանգի Գերջուսի շրջանում): Այս կազմակերպությունը հիմնականում գործունեություն ծավալում էր Թուրքիայի քրդաբնակ նահանգներում, հատկապես Դիարբեքիրում: Դա ռազմականացված մի կազմակերպություն էր, որի նպատակն էր քրդական իսլամական պետության ստեղծումը: Հատկանշական է, որ վերոհիշյալ երկու խմբավորումների ղեկավարներն էլ ավարտել են Թուրքիայի քաղաքաշինության, դիվանագետների ու քաղաքական գիտությունների գլխավոր դարբնոց համարվող Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետը, որի շրջանավարտներին Թուրքիայում կոչում են *mulkıyeliler*: Հանդես գալով իսլամական գաղափարներով՝ «Հրզբալլահը» տարիների ընթացքում վերածվեց բացառապես ահաբեկչական, թմրադեղերի և զենք ու զինամթերքի ապօրինի շրջանառությամբ զբաղվող կազմակերպության<sup>106</sup>:

«Հրզբալլահը» առավել հայտնի դարձավ 1988 թ.-ից հետո, երբ երկրի հարավ-արևելքում իր պայքարն ուղղեց ՔԱԿ-ի դեմ: Այդ երկու խմբավորումների միջև ընդհարումների հետևանքով երկուստեք սպանվեցին մեծ թվով զինյալներ: Միանգամայն ակնհայտ էր, որ թուրքական կառավարությանը հաջողվել էր պառակտել քրդական շարժումը: Հետագայում՝ 2000 թ. հունվարի 17-ին, Ստամբուլի Բեյքոզի շրջանում տեղի ունեցած ոստիկանական շուրջկալի ժամանակ Հ. Վելիօղլուն սպանվեց<sup>107</sup>: «Radikal» օրաթերթի թղթակից էսյեն Մահչուպյանը նշում էր, որ բոլորի համար ակնհայտ էր, որ «Հրզբալլահը» թուրքական կառավարության զենքն էր՝ ստեղծված ընդդեմ ՔԱԿ-ի<sup>108</sup>:

1996 թ. Թուրքիայի Բարօրության կուսակցությունից կազմավորված կառավարությունը, երբաքանի գլխավորությամբ շարունակելով պետական ավանդույթը, քրդական շարժումը պիտակեց որպես ահաբեկչություն: Օրակարգում դրված էր Աբդուլլա Օջալանին ասպարեզից վերացնելու հարցը: Անկարայի ճնշման ներքո 1998 թ. հոկտեմբերի վերջին սիրիական կառավարությունը Օջալանին զրկեց քաղաքական ապաստանի իրավունքից: Տարբեր երկրներում մի քանի օր տևած դեգերումներից հետո Օջալանը ձերբակալվեց թուրքական հատուկ ծառայությունների կողմից և 1999 թ. հունիսին դատապարտվեց մահապատժի, որը հետագայում փոխարինվեց ցմահ բանտարկության՝ առանց համաներման իրավունքի:

Այդ իրադարձություններից հետո քրդական շարժումը Թուրքիայում կտրուկ անկում ապրեց: Օջալանը Իմրալի կոչված կալանավայրից կոչով դիմեց իր հետևորդներին՝ նրանց հորդորելով զենքը ցած դնել և կառավարության հետ մտնել բանակցությունների մեջ՝ նրա պահանջների մասնակի բավարարման պայմանով: Անսալով քարիզմատիկ առաջնորդի հորդորներին՝ ՔԲԿ-ի բազմաթիվ զինված ստորաբաժանումներ դադարեցրին իրենց դիմադրությունը: Մինչդեռ մի շարք քրդական կազմակերպություններ չենթարկվեցին Ափոյի (այդպես են քրդերն անվանում Ա. Օջալանին) հորդորներին և շարունակեցին պայքարը<sup>109</sup>: Մասնավորապես Թուրքիայի հարավարևելյան շրջաններում եռանդուն կերպով շարունակեց գործել

<sup>106</sup> Տե՛ս **Etyen Mahçupyan**, Hisballah ürerinden siyasi, "Radikal", 2000, Ocak 30:

<sup>107</sup> Տե՛ս **Վ. Տեր-Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 123:

<sup>108</sup> Տե՛ս **Etyen Mahçupyan**, նշվ. թերթը:

<sup>109</sup> Տե՛ս "Milliyet", 08.03.2008:

այսպես կոչված «Գյուղական պահապանների համակարգը», որը պարտիզանական զինված պայքար էր մղում:

Կասկածից վեր է, որ քաղաքական ասպարեզից Օջալանի հեռացումը քրդական ապստամբական շարժումը գեթ առժամանակ դատապարտեց անկման: Թեև պետք է նշել, որ Թուրքիայի տնտեսապես հետամնաց հարավարևելյան շրջաններում ՔԲԿ-ն շարունակում էր ազդեցիկ իշխանություն ունենալ: Ավելի ճիշտ՝ նրա իշխանությունը նշված վայրերում գրեթե անսահմանափակ էր: Առ այսօր ՔԲԿ-ն, անկասկած, թուրքական Քրդստանի խոշորագույն քաղաքական ուժն է: ՔԲԿ-ի ռազմական կազմակերպությունը՝ Քրդստանի ժողովուրդների ազատագրման բանակը (ՔժԱԲ), որոշ տվյալներով ներկայումս հաշվվում է 20-40 հազ. մարդ: Այդ ուժերին հաջողվում է Թուրքիայի համար խիստ զգայուն քրդաբնակ շրջանները պահել լարված վիճակում: 1984 թ.-ից սկսած՝ ՔԲԿ-ն մղում է զինված պայքար, որի ընթացքում արդեն զոհվել է 40 հազ. մարդ:

Ներկայումս ոչ միայն քրդական պետականություն ստեղծելու հարցում, այլև պայքարի մարտավարության խնդրում քրդերի քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների միջև միասնություն և ընդհանուր տեսակետ գոյություն չունեն: Ավելին, նրանց միջև դիմակայությունն ու առձակատումը հաճախ վեր է ածվում եղբայրասպան զինված բախումների: Ջանքերի միավորման ուղղությամբ կատարված քայլերը հաջողությամբ չեն պսակվել: Պառակտումը շարունակվում է: Եվ հենց դրանում է քրդական շարժման թուլությունը: Իրաքյան Քրդստանի կամ այսպես կոչված հարավքրդստանյան առաջնորդները, այդ թվում նաև Իրաքի նախագահ, ազգությամբ քուրդ Ջալալ Թալաբանին, գտնում են, որ ՔԲԿ-ն պետք է գեներլ վայր դնի և զինաթափվի: Ա. Օջալանը առաջ էր քաշել այսպես կոչված «ժողովրդավարական համադաշնության գաղափարը», ըստ որի՝ քրդերը որպես ազգ պետք է միավորվեն գոյություն ունեցող չորս պետությունների՝ Թուրքիայի, Իրաքի, Իրանի և Սիրիայի սահմաններում: Սակայն ներկայումս այդ ծրագիրը թվում է իդեալիստական և անիրագործելի: Թուրքիայում իշխանություններին հաջողվել է հավաքագրել ու զինել մեծ թվով քրդերի (որոշ տվյալներով մինչև 80 հազ., որն անկասկած չափազանցված է): Այդ զինյալներին ժողովուրդն անվանում է «քրուջներ», իսկ ավելի հաճախ՝ «ջաշեր» («դավաճաններ»): Տարբեր տեսակետներ ունեն քրդական գործող կուսակցություններն ու կազմակերպությունները նաև քուրդ ժողովրդի քաղաքական ճակատագրի հարցերը վերլուծելիս: Չակընդդեմ կարծիքների ու կողմնորոշումների այդ լաբիրինթոսում ամենատարածված կարծիքը, սակայն, հետևյալն է. պետք է քրդական հիմնախնդիրը լուծել երկրի ամբողջականության շրջանակներում<sup>110</sup>: Այլ կերպ ասած՝ այսօր Թուրքիայի քրդերը պահանջում են ոչ թե թուրքական պետության մասնատում, այլ քրդական հիմնախնդրի լուծում Թուրքիայի կազմում: Ըստ այդ տեսակետի՝ Քրդստանը պետք է ստանա ինքնավարություն Թուրքիայի կազմում, քրդերենը ձեռք բերի երկրում երկրորդ լեզվի կարգավիճակ՝ Քրդստանում դառնալով գործավարության լեզու և ժողովրդական կրթության համակարգի լեզուներից մեկը: Ենթադրվում է, որ մեծ երկիրը, որը ելքեր ունի դեպի Եվրոպա, ինտեգրման որոշակի մակարդակը հաշվի առնելով, քրդական հիմնախնդրի

<sup>110</sup> Տե՛ս **Ն. Զ. Մոսակի**, Քրդական հարցի արդի վիճակը Թուրքիայում, «Զագրոս», 2009 թ., հոկտեմբեր, թիվ 10 (26), էջ 5:

լուծման դեպքում քրդերին տրամադրում է ավելի մեծ հնարավորություններ, քան անկախ Քրդստանը:

Հանրապետական Թուրքիայի կառավարությունը քրդերի նկատմամբ ավանդաբար վարել է «կոշտ մամլիչի» քաղաքականություն: Թուրքական կանոնավոր բանակը ահաբեկչության դեմ պայքարի պատրվակի տակ ռազմական գործողություններ է իրականացրել և այսօր էլ իրականացնում է քուրդ բնակչության դեմ: Թուրքական սահմանադրությունը արգելում է խորհրդարանում խոսել որևէ այլ լեզվով, բացի թուրքերենից: Թուրքական իշխանությունները հրաժարվել են ճանաչել քրդերի ազգային իրավունքները և նույնիսկ քուրդ ժողովրդի գոյությունը, մայրենի լեզուն ու մշակույթը, իրենց օրենսդրության մեջ ընդունել են տխրահռչակ 301-րդ հոդվածը, որով դատապարտվել են հազարավոր քրդեր՝ իրենց կարծիքն ազատ արտահայտելու համար, որտեղ ՔԲԿ-ն համարվում է ահաբեկչական կազմակերպություն և այլն:

Սակայն մեր օրերում թուրքական կառավարող շրջանները արդեն սկսել են պարզորոշ գիտակցել, որ քրդական հիմնախնդիրը տարածաշրջանի ամենամեծ խնդրահարույց հանգույցներից մեկն է. այն դառնում է մերձավորարևելյան երկրաքաղաքականության հիմնական գործոններից մեկը՝ անմիջականորեն շոշափելով գործնականում բոլոր հիմնական տարածաշրջանային տերությունների շահերը: Իսկ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, քրդական հարցի շուրջը ծավալվող կոնֆլիկտը կարող է վերածվել միջտարածաշրջանայինի: Դա սպառնալիքի տակ կոնի գործող և ապագայում կառուցվելիք նավթամուղների և գազատարների գործունեությունը: Նույնը վերաբերում է նաև եվրասիական տրանսպորտային միջանցքին:

Այդ բոլորը ստիպում է թուրքական կառավարող շրջաններին որոնել քրդական բարդ խնդրի լուծման այլընտրանքային ճանապարհներ: Թուրքերի համար որպես այլընտրանք կարող է ծառայել քրդերի մշակութային ինքնավարությունը: Այդ գաղափարը հրապուրիչ է նախ և առաջ նրանով, որ այնտեղ բացակայում է սահմանների վերանայման անհրաժեշտությունը: Բացի այդ՝ քաղաքակիրթ ձևով կլուծվի ազգերի ինքնորոշման և սահմանների անխախտելիության միջև առկա հակասականությունը: Քրդերի ազգային-մշակութային պահանջների բավարարումը մշանակալիորեն կնվազեցնի լարվածությունը տարածաշրջանում, հնարավորություն կստեղծվի կենսագործել զարգացման խոշոր նախագծեր, որոնք կնպաստեն մեծ թվով աշխատատեղերի ստեղծմանը և սոցիալական լարվածության թուլացմանը, քրդական շարժման մեջ կնվազի ծայրահեղական տարրերի սոցիալական բազան, որը զինված դիմակայության փոխարեն կթեթևացնի պրոբլեմի սահուն անցումը դեպի քաղաքական հարթություն: Վերջապես, Եվրամիությանը անդամակցել ձգտող Թուրքիան հիանալի հնարավորություն կստանա եվրոպական երկրներին հանդգելու, թե իբր ինքը փոխել է քաղաքականությունը քրդերի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ քրդական հարցում թուրքական քաղաքականության «ազատականացման» պատճառներից մեկը, թերևս - կարևորագույնը այն է, որ Թուրքիան ցանկանում է դառնալ Եվրամիության անդամ<sup>111</sup>:

<sup>111</sup> Ст'ю Жигалина О. И. Курдский вопрос и проблема стабильности в Западной Азии // "Курдский вопрос в Западной Азии в начале XXI века". М., 2006, էջ 197:

Քրդական քաղաքականության բնագավառում Անկարայի հիմնական ռազմավարական հրամայականը, անշուշտ, եղել և մնում է բուն թուրքիայում և նրա սահմաններից դուրս քրդական շարժումը ջլատելը և քրդերի միասնությունը թուլացնելը: Թուրքերը փորձում են իսլամի օգնությամբ պահպանել դարերով գոյություն ունեցող թուրք-քրդական դաշինքը: Այդուհանդերձ, չի բացառվում, թեև քիչ հավանական է, որ այնուամենայնիվ թուրքիայի քրդաբնակ շրջանները թուրքիայից անջատվելու ենթադրական հնարավորությունը ստիպում է Անկարային դիմելու թուրքիայի քաղաքական ավանդույթին անհարիր որոշ զիջումների՝ նպատակ ունենալով ինչ-որ չափով համահարթել կենտրոնի և երկրի հարավ-արևելքի միջև առկա հակասությունները: Թուրքիան նաև փորձում է տպավորություն ստեղծել, որ սկսել է ըմբռնումով մոտենալ քրդական հիմնախնդրին: Դրանով նա ցանկանում է դրսի աշխարհի վրա թողնել ժողովրդավար պետության տպավորություն:

2005 թ. թուրքական իշխանությունները պաշտոնապես ճանաչեցին «քրդական հարցի» գոյության փաստը երկրում<sup>112</sup>: Իսկ մինչ այդ թուրքիայում կառավարող Արդարություն և զարգացում կուսակցությունը դեռևս 2002 թ. նոյեմբերին հանդես եկավ հայտարարությամբ, որ մտադիր է քրդական շրջաններում արագացված տեմպերով իրականացնել բարեփոխումներ տնտեսության բազմաթիվ բնագավառներում, ինչպես նաև տեղական բնակչության կենցաղում<sup>113</sup>:

2009 թ. հունվարի 1-ից Ստամբուլում բացվեց "TRT6" պետական հեռուստաալիքը, որը սկսեց քրդերենով հեռարձակել շուրջօրյա հաղորդումներ: Այդ հեռուստաալիքի բացման արարողության ժամանակ թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանը երկրի պատմության մեջ առաջին անգամ հեռուստադիտողների լսարանին քրդերենով դիմեց կարճ ողջույնի խոսքով: 2009 թ. փետրվարի 21-ին վարչապետ Էրդողանը Դիարբեքիում տեղի ունեցած նախընտրական հանրահավաքի ժամանակ հայտարարեց, որ իշխանությունները թույլատրում են հայրենիք վերադառնալ վտարանդիության մեջ գտնվող հայտնի քուրդ երգիչ Սիլվան Փերվերին: Իշխանությունների թույլտվությամբ Ստամբուլում բացվեց քրդագիտական հետազոտությունների կենտրոն, իսկ Դիարբեքիի համալսարանում՝ քրդագիտության ամբիոն:

2009 թ. գարնանը՝ իսլամական նոր տարվա՝ նովրուզի օրերին, թուրքիայի նախագահ Աբդուլլա Գյուլը շնորհավորեց քրդերին և առաջին անգամ հայտարարեց, որ թուրքիան մի երկիր է, որտեղ խաղաղության մեջ ապրում են տարբեր լեզուներով խոսող, տարբեր էթնիկական արմատներ և մշակույթ ունեցող ժողովուրդներ, թեև թուրքիայում բոլոր ժողովուրդները պաշտոնապես համարվում են թուրքեր: 2009 թ. մայիսի 8-ին թուրքական NTV հեռուստաալիքով ելույթի ժամանակ նախագահ Աբդուլլա Գյուլը ուղղակի խոստովանեց, որ թուրքիայում գոյություն ունի քրդական հարց, և այն պետք է գտնի իր լուծումը: Սակայն թուրք ազգայնական ուժերը միասնաբար հանդես եկան նախագահի դեմ և նույնիսկ նրա դեմ դատա-

<sup>112</sup> Տե՛ս **Вертяев К. В.** Вопросы демократизации и курдский вопрос в Турции в начале XXI века // "Курдский вопрос в Западной Азии в начале XXI века". М., 2006, էջ 158:

<sup>113</sup> Տե՛ս "Hükümet Programı: Başbakan Abdullah Gül tarafından TBMM'ne sunulan 58'inci "Hükümet Programı", 23. 11. 2002:

կան հայց ներկայացրին: Առավել ծայրահեղական ազգայնականները Գյուլին նույնիսկ մեղադրեցին հայկական ծագում ունենալու մեջ:

Առհասարակ պետք է նշել, որ թուրքական իշխանությունները ընդհանուր առմամբ համակարծիք են, որ քրդական հարցը ներկայիս Թուրքիայի թիվ մեկ հիմնախնդիրն է: Իսկ ամենակարևորը՝ նրանք հանգել են այն համոզման, որ այդ հիմնախնդիրը հնարավոր չէ լուծել ռազմական մեթոդներով: Ի դեպ, այդ մասին ավելի հաճախ են խոսում թուրքական գեներալները՝ հարուցելով հասարակության զարմանքը:

Այսօր անվարան կարելի է ասել, որ Թուրքիայի ողջ պատմության ընթացքում և՛ կառավարությունը, և՛ զինվորականությունը, և՛ հատուկ ծառայությունները առաջին անգամ որոշակիորեն նոր կոնսենսուսի են հասել քրդական հիմնախնդիրը լուծելու անհրաժեշտության և ռազմական մեթոդներով այն լուծելու անհնարինության առումներով<sup>114</sup>: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ տեսանելի ապագայում կարելի է սպասել որոշակի տեղաշարժեր Թուրքիայում քրդական հիմնախնդրի զարգացումների ճանապարհին:

Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ թուրքական քաղաքականության առանձնահատկություններից մեկը ուժային ընդհատակյա կենտրոնների գոյությունն է, որոնք էապես ազդում են երկրում իրականացվող ներքին քաղաքականության վրա: Այդ երկրում առկա են գաղտնի կիսառազմական ազդեցիկ կազմակերպություններ (օրինակ՝ տխրահռչակ «Էրգենեկոն») կոչված գաղտնի և բազմաշերտ կազմակերպությունը, որը 1980 թ.-ից սկսած լայնածավալ պատերազմ է մղում Քրդական բանվորական կուսակցության դեմ): Այս համատեքստում քրդստանյան քաղաքական բեմում տեղի ունեցող շատ իրադարձություններ որոշ չափով պայմանավորված են Անկարայում թուրքական ուժերի միջև ընթացող ներքաղաքական պայքարով:

Թուրքական իշխանությունները ևս, չնայած քրդական հարցում ներկայումս իրենց վարած ազատականացման քաղաքականությանը, ժամանակ առ ժամանակ կտրուկ միջոցների են դիմում քրդերի պահանջները «չափավորելու» ուղղությամբ: Այսպես, 2009 թ. դեկտեմբերի 11-ին Թուրքիայի սահմանադրական դատարանը որոշում կայացրեց քրդամետ «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցությունը փակելու վերաբերյալ: Սահմանադրական դատարանի նախագահ Հաշիմ Քըլըչը հայտարարեց, որ կուսակցության փակման որոշումը պայմանավորված է այդ կուսակցության՝ Քրդական բանվորական կուսակցության հետ կապեր ունենալու և Թուրքիայի անբաժանելիության սկզբունքին վնասներ հասցնելու հանգամանքներով: Կուսակցության առաջնորդ Ահմեդ Թյուրքն ու «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցությունից ընտրված թուրքական խորհրդարանի պատգամավոր Այսել Թուրլուքը վտարվեցին երկրի խորհրդարանից: Նրանց և մի քանի կուսակցական գործիչների հինգ տարով արգելվեց զբաղվել քաղաքական գործունեությամբ: Թուրքական «Անադոլու» լրատվական գործակալության տեղեկացմամբ՝ Ստամբուլի քրեական դատարանը որոշում է կայացրել սկսել պատգամավորական անձեռնմխելիությունից զրկված «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության նախկին պատգամավոր Այսել Թուրլուքի գործով դատավա-

<sup>114</sup> Տե՛ս **Ն. Զ. Մոսակի**, Քրդական հարցի արդի վիճակը Թուրքիայում, «Զագրոս», 2009 թ., հոկտեմբեր, թիվ 10 (26), էջ 5:

րությունը: Սահմանադրական դատարանի որոշմամբ արգելված հիշյալ կուսակցության գույքը և այլ միջոցները ենթակա են բռնագրավման:

Կարևոր է նշել, որ «ԺՅԿ» անդամները թուրքական խորհրդարանում պարբերաբար հանդես էին գալիս հայերի օգտին հայտարարություններով: Օրինակ, այդ կուսակցության պատգամավոր Սելահեդդին Դեմիրթաշը թուրքիայի խորհրդարանում հայ-թուրքական ստորագրված արձանագրությունների քննարկումների ժամանակ մեղադրեց թուրքիայի իշխանություններին՝ հայերի կոտորածները դասագրքերում չգետեղելու և դրա փոխարեն սխալ ու նենգափոխված տեղեկություններ տալու մեջ:

Թուրքիայում օրինական գործող միակ քրդամետ քաղաքական ուժի՝ «ԺՅԿ»-ի կասեցման մասին դատարանի որոշումը փողոց դուրս բերեց հազարավոր քուրդ երիտասարդների: Կարճ ժամանակ անց բախումներ սկսվեցին Ստամբուլի արվարձաններում: Այնուհետև բախումները տեղափոխվեցին արևելյան շրջաններ: Իրավիճակն ավելի սրվեց, երբ խորհրդարանի 19 քուրդ պատգամավորները որոշեցին իրենց մանդատները վայր դնել:

Հարկ է նշել նաև, որ արտաքին գործոնները չեն նպաստում քրդական հարցի դրական զարգացումներին: Մերձավոր և Միջին Արևելքի ոչ մի երկիր չահագրգռված չէ թուրքիայի տարածքում քրդական պետություն ստեղծելու հարցում: Այդ նույնը վերաբերում է նաև մեծ տերությունների դիրքորոշմանը: Վերջիններիս կարծիքով, քրդական շարժման մեջ գերակայում են ծայրահեղական տարրերը: 2004 թ. Եվրամիությունը ԶԲԿ-ն ընդգրկեց ահաբեկչական կազմակերպությունների շարքը՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Արևմուտքում այն համոզմունքին են, որ քրդերի պայքարը հանուն անկախ պետականության ստեղծման, կարող է առաջ բերել զինված կոնֆլիկտների մի ամբողջ շղթա, որը խիստ կապակայունացնի իրադրությունը տարածաշրջանում: Ըստ Եվրամիության, անհրաժեշտ է, որ թուրքական կառավարությունը քրդական հարցը դիտի «մարդու իրավունքների և ազատության» պահպանման շրջանակներում<sup>115</sup>:

Վերջին ժամանակներս քրդական հիմնախնդիրը Արևմուտքին հանգեցնում է քրդերի ներկայացուցիչների հետ լայնածավալ երկխոսության անհրաժեշտության գիտակցմանը: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի նախաձեռնությունները քրդական աչքի ընկնող առաջնորդների հետ երկխոսություն սկսելու վերաբերյալ:

Ներկայումս ամբողջ աշխարհում քրդերի թիվը հասնում է 30-35 մլն մարդու: Աշխարհում նման թվաքանակ ունեցող բոլոր ժողովուրդներն ունեն պետականություն: Կասկածից վեր է, որ քուրդ ժողովուրդը ևս վաղ թե ուշ իրականացնելու է իր դարավոր երազանքը պետականություն կերտելու վերաբերյալ: Իրաքյան Քրդստանում քրդերն արդեն ձեռք են բերել բարձր կարգի ինքնավարություն: Բոլոր նշանները կան, որ մեր օրերում, ինչպես նախկինում էր, թուրքիան դառնում է քրդական շարժման կարևորագույն կենտրոններից մեկը:

---

<sup>115</sup> **Verheugen G.** In the case of Turkey we are still concerned about the human rights and the rights of minorites, *Elegans International*, (52), 2001, p. 138-140.

**ВААН БАЙБУРТЯН – *Курдский вопрос в республиканской Турции.*** – В статье показывается, что кемалисты с самого начала выступали против национальных прав курдского народа. После образования в 1923 г. Турецкой республики её правящие круги продолжили политику жесточайшего угнетения и насильственной ассимиляции нетурецких народов. Поскольку единственным реальным препятствием на пути к созданию моноэтнического государства были курды, именно они подвергались сильнейшему давлению со стороны властей. Курдский язык и курдская идентичность запрещены в Турции до настоящего времени. В результате этой политики курды оказались в числе самых экономически отсталых и бесправных народов страны. Многочисленные факты, приводимые в статье, убеждают, что неоднократные попытки властей решить курдскую проблему силовыми методами не приносят желаемого результата.

**VAHAN BAYBURDYAN - *The Kurdish issue in Republican Turkey.*** – The paper demonstrates how the nationalistic Kemal Turks violated the national rights of the Kurds. Later, after the Republic of Turkey was formed in 1923, the country authorities carried on with their severe policy of oppression and forceful assimilation of non-Turkish nations.

As the Kurds were considered the only obstacle in the creation of a mono-ethnic state, they were exposed to a severe pressure maintained by the Turkish authorities. At present, both the Kurdish language and the Kurdish identity are banned in the Republic of Turkey. This policy deprived the Kurds of their rights and led them to being one of the most economically retarded nations in the Republic of Turkey.

Based on a variety of facts, the paper demonstrates how void and futile the endless attempts of Turkey to resolve the Kurdish issue with coercive methods appeared to be.